


ՏԵՐԵՎԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ Ե

Պ. ՊՈՍԹ

ԳՐԱԴԱՐԱՆ
Институт
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԵՆԵՐԳԻԱ ԱՅԻ
ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅՈՒՆԸ



ՊԵՏԱՐԱՔ
ԵՐԵՎԱՆ 1931

С 32-К
114

ՏԵԽՆԻԿԱՆ ԱՎԱՍԽԵՐԻՆ
25 NOV 2010

891. 71
Բ-67

Պ. ԱՊՄՄ

ԱՅԱԼՈՒՐՔԱ
ԻՆՍՏԻՏՈՒ
ՅՈՒՆԻՑԵԴԵՆԻ
Ակադեմիա Խոյ
ՀՀՀԲ

Ե Ն Ե Ր Գ Ի Ա Յ Ի
ԵՐԶԱՆԱԾՈՂԹՅՈՒՆ

(ԵՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ)

Զրույց բանվարերի ներ

ԳԵՂԱՐՔՈՒՅՈՒՆ 1931 Հ ԵՐԵՎԱՆ



24 JUL 2013

13288

ՀԱՅՈՒԹԻՒՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԵՏՎՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ
 ԳԼԱՎԱՆԻ № 6538
 ՃՐԱՏԱՐԱԿ. № 1690
 ՊԱՏՎԵՐ № 3266
 ՏԻՐԱԳ 5000



56816-66

Եղեկուրամի խանճիկան գործարանի մի խումբ
 բանվորներ ճաշի ընդուժումի ժամանակի խոսում էլին
 արտադրական ըջիչի յերեկովա ժողովի ժաման:

— Ի՞նչ տաք վիճաբանություն եր յերեկ, — կատաց
 ձուլող (լիսելչչիկ) Մարդարյանը, — խեղճ Պետրոս
 յանն ինչքան ել աշխատեց պաշտպանվել, բայց բան
 զուրս չեկավ, վերջը ստիպված եր զիջելու:

— Ասենք վժվար ել եր գիմանալ, — ընդհատեց
 Մարդարյանին ներկարարական (մալյարնի) ցեխից մի
 ընկեր, — խեղճին վրա յեխն տվել և մեր հին մասնա-
 գետները և յերիտառապետ Կարմիր ինժեներները: Մեքե-
 նան ուղղակի քրքրեցին, սաղ տեղ չթողին:

— Գուցե և ճիշտը նրանք են, — մեր մասնագետ-
 ները, — բայց մեղքս դալիս ե խեղճ Պետրոսյանին, —
 ասաց Մարդարյանը: Ցեղբայր, մարդը լավ մեքենա յե
 մտածել հնարելու: Անում ե, քեզ վոչ ածուխ ե պետք
 և վոչ ել ջուր. մշտավես ինքն իրեն կպատրաստվի և
 շարժման մեջ կընի գործարանի բոլոր մեքենաներն ու
 զագդյաները (ստանոկները): Յերեակայիր ինչ մեծ
 խնայողություն կլինի: Մեր վասելու ածուխը Դոնբր-
 սից են բերում: Ապա նայիր, թե ինչքան ածուխ ե կու-
 տակված գործարանի չորս կողմերում: Խակ Պետրոս-
 յանի հնարած մեքենայի համար վոչ մի կտոր ածուխ
 չի պահանջվում: Անշուշտ մեծ տնտեսում կունենա-
 յինք պատաշը գույքին մեջ: Վոչ ածուխ առելացը,

վոչ ջուր լից: Մի խոսքով, քո գործին վերջ,—Գողթունի:

— Շատ հաջող բացատրեց Պետրոսյանն իր մեքենայի իրատը, և իրոք, ամեն ինչ դուրս յեկավ այնքան հասարակ ու հասկանալի, —մեջ մտավ հնոցապան ընկ. Գողթունին, բայց մեր մասնագետներն այնպես եյին իրար անցել, այնպես եյին աղմկում, գորդուռում և ինեղին չորս կողմից մեծ-մեծ բառերով խոսքակոխ անում: Միայն «եներզիա» բառը միտու պահեցի և ելի ինչ վոր... վախենում եմ, վոր չեմ ել վերհիշի այժմ, շատ տարորինակ բառ եր...

— Յերեի պերակետուում մոբիլե, —վրա բերեց տեխնիկական դեկալար Կարապետյանը, վոր մի քանի ըսպելից ի վեր լսում եր բանվորների խոսակցությունը:

— Այս, այս, — չորս կողմից պատասխանեցին բանվորները: Ինչ ե նշանակում այդ բառը:

— Պերպետուում մոբիլե հայերեն նշանակում ե «հավիտենական շարժիչ»: Բայց վաղուց են խաչ քաշել այն տեսակ մեքենաների վրա, ինչպիսին Պետրոսյանին ե: Գիտնականներն արդեն վաղուց վորոշել են, վոր այդպիսի մի մեքենա—«հավիտենական շարժիչ» յերրհք չի կարող կառուցվել:

— Զեր լինի՞՝, մի պատմելիք մեզ, ընկ. Կարապետյան, թե ի՞նչ բան ե այդ եներզիան և թե ինչո՞ւ չի կարելի կառուցել «հավիտենական շարժիչը»:

— Ինչու չե, ընկերներ: Այդ կարելի յե, մի դըժվար բան ել չե: Կուգեք, այսոր յերեկո հավաքվենք ակումբը, քաշվենք մի անկյուն և խոսենք այդ մասին: Յես կաշխատեմ պարզ և հասկանալի ձեզով պատմել ձեզ, թե ինչու անհնարին ե այնպիսի մեքենա կառուցել, ինչպիսին ցանկանում ե Պետրոսյանը:

— Շատ լավ, շատ լավ, —չորս կողմից ձայնեցին բանվորները և պայմանակորպեցին ուղիղ ժամի 7-ին հավաքվել ակումբի սենյակներից մեկում և լսել, թե ինչ կուտամի այդ մասին իրենց տեխնիկական զեկավարը:

— Ավելի լավ չեր լինի, Պետրոսյանին ել հետներս քերենք, — հարցրեց վարպետ Միքայելյանը:

— Բերեք, անպատճառ նրան ել բերեք, թող լսի, — նա իներոք մարդ ե, ով ե իմանում, հետագայում գուցե մի ուրիշ, ավելի լավ մեքենա հնարի, — նկատեց տեխնիկը և զնաց իր գործին:

Հենց այդ բոպեյին ճաշկա ընդմիջումը վերջանալու սուլիչը սուլեց:

Բանվորներն սկսեցին ցըլել իրենց ցեխերի մեջ: Ամեն մեկը մոտեցավ իր մեքենային և ոկտեց զբաղվել իր գործով:

I

Յերեկոյան ուղիղ ժամի 7-ին, բանվորներից տասը հոգի հավաքվեցին ակումբի կահավորված և լուսավոր սենյակներից մեկում: Ճիշտ նույն ժամին յեկավ նաև տեխնիկական դեկալարը, առանց մի բոպե ուշանալու նշանակված ժամից:

— Ապա ընկ. Կարապետյան, լավին այն ե, իզուք ժամանակ չլուրցնենք մեր հարցումներով, ուղղակի ակսիր պատմել պարզ ու հասարակ ձևով, թե ինչ մեքենա յե հնարել Պետրոսյանը. ասա նաև, թե ինչու յեն այդ մեքենայի դեմ գրգումել թե հին և թե մեր ժամանակի դիտնականները, և թե ինչո՞ւ այդ մեքենան կառուցել անհնարին և՝ հարցը այսպես ուղղակի դրեց հնոցապան Գողթունին:

— Վոչ, ընկերներ, այդպես չի կարելի: Ենթե յետէ մեծէ սկզբունքը ուկսեմ Պետրոսյանի հնարած այդ մեքենայից, ձեզ դժվար կը իմաստ հաւաքանալ նրա կաղմությունը, գլուխ բնակնել, թէ ինչու այդ և առհասարակ այդպիսի մեքենաները բանի պետք չեն: Աւդեմք չուղենք պետք և ակսենք մի քիչ հետիվ: Դրա փոխարեն յես հավատացած եմ, վոր յեթք գուլք համբերությամբ և ուշադրությամբ ինձ լսեք, հետաղայում չեք ափսոսի վասնած ժամանակի համար: Իսկ յերբ զբույցը վերջանենք, կարծում եմ, վոր հենց զու ինք, ընկ: Գողթունի, կեարողանաս բացատրել մյուս ընկերներին, թէ ինչու Պետրոսյանի մտածածն անիբագրոծելի յե:

— Թող քո ասածը լինի, ընկ: տեխողել փոքր ինչ գժղոհ ձայնով վրա բերեց Թողթունին, հավաքիլի ենք, այժմ միտք չունի դրվելու, պատմիր տեսնենք:

— Սրանից հարյուր հիսուն տարի առաջ, — սկսեց Կաքասիետյանը, — ովու չիային այնպիսի գործարաններ, ինչպիսիները կան այժմ: Խոշոր արվելունաբերությունը գետ նոր եր ծնունդ առնում: Ական եցին առաջ գալ մեծ թվով բանվորներ ունեցող արհեստանոցներ, վորտեղ բանվորներն աշխատում եցին իրենց տերերի համար: Այն ժամանակ վեռ չդիտեցին եկեղեցուական շարժիչների մասին, չովեշարժիչներն ել հենց նոր երին ակուն յերեւալ: Աշխատանքն արհեստանոցներում, — դադարաների վրա, — կատարվում եր սովորաբար ձեռքով, յերբեմն նաև ձիու ուժով, իսկ յերբեմն ել ջրի կամ քամու ուժով: Այստեղից պարզ պետք ել լինի, վոր աշխատանքը շատ ծանր եր, իսկ արաւոդրովականությունը՝ քիչ: Յեկ ահա հենց այդ ժամանակներին ել բանվորները և այն ժամանակիա քամանազեաները» ոկտեմբերի մեր Պետրոսյանի մտածած մեքենայի նման

մեքենաներ հնարեւու: Հարցավ զբաղվել: Այլ մեքենաները պետք եւ աշխատեցին, վորտեղ վոր լիներ, իրենք իրենց, առանց մարտկացին ձեռքի ոգնության և առանց ձիւ: Կամ վորեւ ուրիշ կենուանու քաշելու ուժը զործացրելու: Գլուխովոր անխլը, վորը հաղցվելու յեր առանցքին (վալին), զյուտարանների կարծիքով պետք և պատվիր ինչն իրեն, առանց վորեւ շարժիչը: Անխլը պետք եւ իր հետ պատեցնեցները առանցքը, ինչ վերջինիս միջոցով շարժումը պետք եւ փոխանցվեր մեքենաներին և դադարաներին: Նման մեքենաներ հնարեւու ուղղությունը աշխատողների թիվը տարինց-տարի պահեց առ ձեզ: Գյուտարաններից ամեն մեկը խորապես հածողված եր, վոր իրեն արդեն հաջորդի և, և կամ հաջողվելու ճանապարհին և, հալիտենական շարժիչից հարցը լուծենի:

— Իսկ ինչ, այլ մեքենաներից և վոչ մեկն ել պետքական զուրս չեկա՞վ, — հարցը լսողներից մեկը:

— Յեզ վոչ մեկը: Բայց զյուտարանները չեյին ընկելում: Ամեն տարի նրանք ներկայացնում եցին նորանոր յենթադրություններ և նախազծեր (պրոյեկտեր): Այդ պրայեկտները քննության եցին առնվում պիտուականների կողմից և պարզվում եր, վոր բոլոր այդ հնարած մեքենաների մեջ յերեան և գաղտն միեւնուն սխութը: Իսկ թե վո՞րն եւ այդ սխալը, զուք շուտով կիմանաք: Հնեց այդ նույն սխալն և, վոր կատարել և նաև ընկ: Պետրոսյանը: 1775 թվին ֆրանսիական գիտությունների ակադեմիան վորոշում հանեց այլաբան պրոյեկտներ այլն քննության շառնել և հայտնեց ի լուր բարելին, վոր խոր աշխատանք և «հալիտենական շարժիչից» համար զլույք կտրելը:

— Ախտու, առաց Թողթունին, ինչքան մարդ և

գլուխ կոտրել այդ հարցի վրա, աշխատել արդ ուղ-
ղությամբ, իսկ բանից դուքս ե գալիս, վոր ամեն ինչ
խցուր ե անցել:

Այնքան ել ձիշտ չե այդ, հակառակեց կարա-
պետյանը: Գիտության և տեխնիկայի պատմության
անցյալում շատ են սրատահել այնպիսի դեպքեր, յերբ
մարդիկ տարիներով աշխատել են զանելու անշափ-
ովայր, հաճախ նույնիսկ անլուծելի հարցերի լուծում,
Յերբ նույնիսկ վերջովերջո պարզվում եր, վոր խրն-
դիրն անլուծելիք յե և կամ անիրազործելի, ապա մեծ
գժբախություն չեր: Այդ հարցի լուծման ճանապար-
հին դիտնականները և տեխնիկները հաճախ դալիս ելին
նոր յեղբակացությունների, կատարելով անսպասելիո-
րեն նոր հայտնագործումներ, կատարելազործումներ և
գյուտեր: Մարդիկ վիճուռում ելին, որինակի համար,
Հնդկաստան գնալու ամենակարճ ճանապարհը, գտան
Ամերիկան: Այդպես պատճեց նաև հայտնական
շարժիչի հետ: Հայիստենական շարժիչը թեպէտ և վոչ
մի կերպ չկարողացան կառուցել, բայց գրա վոխարեն
դտան մի վերին աստիճանի կարենոր որենք, վորի վրա
և այժմ հիմնված ե մեր ամբողջ զիտությունն ու
տեխնիկան: Բոլոր մեքենաները, վորոնք հիմա կառուց-
վում են, նաև նըանք, վորոնց վրա դուք ներկայումս
աշխատում եք, գործում են այդ որենքի հիման վրա:

Կարելի յե ասել, վոր այդ որենքն իշխում ե վոչ
միայն այն ամենի վրա, վոր անդի յե անենում յերկրա-
գնդի սահմաններում, այլև ամբողջ տեսանելի աշխար-
հի վրա: Այդ որենքով են ասքում և զարդանում բոլոր
կենդանիները և բույսերը: Երանով և դեկալարվում
յերկրագնդի և բոլոր յերկնային մարմինների, մոլո-
քակների ու աստղերի շարժումը: Մեր անհաման աշ-

խարհում չկա մի այնպիսի անկյուն, վորի մեջ հան-
դես չգար այդ որենքի ազդեցությունը: Հենց այդ ո-
րենքն ե, վոր թույլ չե տալիս կառուցելու այնպիսի
մեքենա, վորպիսին ուզում ե ընկ. Պետքայանը:

— Իո ասածից դուրս ե գալիս, վոր դա վոչ թե
մի սովորական որենք ե, այլ համարյա մի բանակալ
ցար, մպտալով բացականչեց Մարգարյանը: — Հնա-
ցավոր չե՞ր լինի, գրա գլխին ել մի «հոկտեմբեր»
բերենք:

Մի փոքր համբերիր, ընկեր, դու մի առաջ լսիր,
թե ինչումն ե կայսում այդ որենքը, իսկ հետո կտես-
նես, թե կարո՞ղ ես դու այդ որենքը խախտելու փորձ
անել, նրա հետ ուժովից չափվել և թե պետք ե ար-
դյո՞ք քո ասածի պես վարդել:

— Դե լավ, կյանք, միայն թե, ընկ. տնիսղեկ, շատ
ձգձգեցիր. մի քիչ կարճացրու ասելիքդ:

— Հաշիստեմ վորքան հնարավոր և կարճ ու հաս-
կանալիորեն, միայն թե դուք ել շատ մի շտապեք:
Յեթե յավ հասկանաք և ըմբռնեք այն հիմնականը, ինչ
վոր հիմա կասեմ, ապա մնացածն արդեն անհամեմատ
հեշտ և հասկանալի կլինի:

Գետրոսայնն ուզում ե կառուցել մի մեքենա: Ի՞նչ
նույստակի համար: Նրա համար, վոր այդ մեքենան
աշխատանք կատարի: Վոր արդակես ե, յեկեք ամենից
առաջ քննենք այդ հարցը, թե ի՞նչ ասել ե աշխատանք:
Մեզ, բանվորներիս համար այդ դժվար չե հասկանալ:
Աշխատանքի մենք վաղուց ենք սովոր, մանկությու-
նից նրա հետ ենք մեծացել: Յեթե յես, որինակի հա-
մար, ասեմ: — Լավ. Սարգսյան, ապա հորից յերկու
վեղբո ջուր քաշի և բարձրացրու շենքի առաջին հար-
կը, — աս աշխատա՞նք կլինի, թե վոչ:

— Թեսեա, ի հարկե մի ծանր զարծ չե, բայց, այսուամենայնիվ աշխատանք է, — պատասխանեց Մարդույանը:

— Ճիշտ ե, — վրա բերեց տեխնիկական դեկանալը: Իսկ յեթե յես առեմ, — ընկ. Մարգարյան, Հասցրու խնդրեմ այդ յերկու վերջուները նույն չենքի 4-րդ հարկը:

— Այդ արդեն ավելի դժվար աշխատանք կլինի:

— Եսու ճիշտ ե, բարեկամու— և յես քեզ կտսեմ, զոր այդ վերջին աշխատանքը 4 անդամ ավելի մեծ կը մինի, քան առաջին անդամ կատարածը. դու այժմ ջուրը հարցրիր չորս անդամ ավելի բարձր տեղ, քան առաջին անդամ: Յերկու վերջու ջուրն ունի վորոշ ծանրություն, ասենք, մոտավորապես 25 կիլոդրամ քաշ: Յերբ պետք ե լինում մի վարեկ ծանրություն վերև բարձրացնել, մենք աշխատանք ենք կատարում են այնքան ավելի մեծ աշխատանք, վորքան ավելի վերև պետք ե բարձրացնել այդ ծանրությունը: Իսկ հիմա յել քեզ, ընկ. Գողթունի, խնդրում եմ մի վեց վերջու լցնես տակառը և տանես այդ տակառը կաթսայի մոտ: Ի՞նչ ես կարծում, քո աշխատանքը նույնքան կլինի, վորքան Մարգարյանի առաջին աշխատանքը:

— Կատակ ես անում, ընկ. Կարապետյան, վեց վերջուն, այդ վերջու չե, այլ 3 անդամ չատ ե:

— Ճիշտ են հաշիմներդ, ընկ. Գողթունի, դու յերեք անդամ շատ աշխատանք կատարեցիր, քան Մարգարյանի առաջին աշխատանքը: Դու տարար նույն Հարկը, նույն բարձրության վրա, բայց յերեք անդամ ավելի մեծ ծանրություն:

Իսկ յեթե քեզ ինորիմ ընկ. Գողթունի, թե առար, Հասցրու այդ տակառը 4-րդ հարկը:

10

— Խորապես չնորդակալ եմ, ընկ. Կարապետյան. Հեշտ գործ չե, վոր դու ինձ առաջարկում ես:

— Ուղիղ ես նկատում, ամենեկին հեշտ չե: Դու պետք ե կատարես չորս անդամ ավելի մեծ աշխատանք, քան քո առաջին աշխատանքը և տասներկու անդամ ավելի մեծ, քան ընկ. Մարգարյանի աշխատանքը: Դու վերցրիր յերեք անդամ ավելի մեծ ծանրություն (յերկուսի տեղ ե վերջու ջուրը) և բարձրացրիր չորս անդամ ավելի վերել (առաջինի տեղ չորրորդ հարկը): Ահա հենց այդ որենքներից, ընկերներ, գուք տեսնում եք, վոր աշխատանքն այնքան ավելի մեծ ե լինում, վորքան ավելի ծանր ե մարմինը և վորքան ավելի բարձր տեղ ե տարվում: Յերբ պետք ե լինում վեց վերջու ջուրը չորրորդ հարկը բարձրացնել, ապա պետք ե գործադրել 12 անդամ ավելի մեծ աշխատանք, քան այն աշխատանքը, վոր կատարում ենք, յերբ յերկու վերջու ջուրը առաջին հնար հասցնում:

Գիտության և տեխնիկայի մեջ կատարած աշխատանքը չափելու համար (ուզում ե այդ աշխատանքը մարդը կատարի, կենալանին, թե մեքենան), ընդունվում ե վարչու չափ: Այդ չափը համարում են աշխատանքի միավոր, — ճիշտ այնպես, ինչպես մետրը յերկարության միավոր ե և կամ կիլոդրամը քաշի միավոր: Յերբ պետք ե լինում մի կիլոդրամանոց կշառքարը բարձրացնել մի մետր, տարա այդ ժամանակ կատարած աշխատանքը ընդունվում ե վորպես միավոր և կոչվում ե կիլոգրամունքոր: Այսուելից պարզ է, վոր յեթե մենք ուզում ենք բարձրացնել մի կիլոդրամը չորս մետր, ապա կատարված աշխատանքը չորս անդամ ավելի կլինի, այսինքն, համարար կլինի չորս կիլոգրամունքորի: Իսկ յեթե չորս մետր բարձրացնենք

11

վոչ թե մեկ, այլ յերեք կիլոդրամ, ապա կատարած աշխատանքն արդեն տասներկու անգամ ավելի մեծ կլինի, քան առաջին աշխատանքը և դրա համար ել հայաստար կլինի 12 կիլոդրամոմետրի: Ուրիշ խոսքով ասած, ամեն մի աշխատանք, վոր կատարվում է ծանրություն բարձրացնելիս, կարելի յե չափել կիլոդրամոմետրներով, յեթե ծանրության քաշը (կիլոդրամները) բաղմապատկենք բարձրությամբ (մետրներով) $3 \times 4 = 12$ կիլոդրամոմետրի:

— Այս բոլորը միանդամայն պարզ ենկամ. տեխնիկ, ոնկատեց լողիներից մեկը: — Բայց քո ասածներից դուքս ե գալիս, վոր ամեն աշխատանք հենց միայն նրանումն է կայանում, վոր ծանրությունը վորոշ բարձրության հասցվի: Իսկ յերբ յես, որինակի համար, մի գերան եմ աղոցում և կամ ասենք, մեքենան պատուակի (վիճակի) վրա փորձածք ե անում (ուրեզա), չե՞ վոր այլտեղ վոչ մի ծանրություն վերև չի բարձրացվում, մինչդեռ կարծես թե աշխատանք կատարվում ե:

— Դու իրավացի յես, — պատուախանեց տեխնիկ կարապետյանը, — քո բերած որինակների մեջ ել աշխատանք է կատարվում, և այդ աշխատանքը նույնական կարելի յե չափել կիլոդրամոմետրներով: Բանի եյությունն այնուամենայնիվ մնում է նույնը: Վոր այդպես ե, յեկեք մի ամենից առաջ ճիշտ կերպով պարզենք, թե ծանրությունը բարձրացնելիս ինչումն է կայանում աշխատանքը: Դուք բոլորդ ել գիտեք, վոր ազատ թողած ամեն մի մարմին վայր ե ընկնում գետնին: Այդ տեղի յե ունենում ձգողության ազդեցության տակ, վորը բոլոր մարմինները ձգում ե գեղի գետինը: Այդ ուժը միշտ ուղղված է ծանրությունից գեղի ներքեւ՝ գեղի գետին:

12

յես ստիպված եմ հաղթահարել դեպի յերկիրն ուղղվությած ձգողությունը: Յես բարձրացնում եմ ծանրությունը, այսինքն քաշում եմ նրան վերև, ազդում եմ նրա մրա այնպիսի ուժով, վորը ձգողության ուժին հակառակ ուղղություն ունի և այդպիսով այդ յերկրորդ ուժով յես հաղթահարում եմ ծանրության ձգումը գեղի գետին, ուրիշ խոսքով, հաղթահարում եմ ինչ վոր դիմադրության: Դրանով յես աշխատանք եմ ծախսում այդ դիմադրությունը հաղթահարելու համար: Եերբ վորեւ ուժի ողնությամբ (ծառի սղոցման գեղքում՝ ձեռքի մկանի ուժի ողնությամբ), հաղթահարում ենք վորեւ դիմադրություն (սղոցավ գերանի կարծրությունը, ամրությունը), այդ գեղքում մենք աշխատանք ենք կատարում: Իսկ քիչ հետո կիմանանք, վոր այդ աշխատանքն ել կարելի յե չափել կիլոդրամոմետրներով, թեղետ և վոչ այնպես հեշտ, ինչպես ծանրությունը բարձրացնելու դեպքում:

Դուքս ե գալիս, վոր ամեն անգամ աշխատանք է կատարվում, յերբ վորեւ առարկա շարժվում է և դրանով վորեւ դիմադրություն հաղթահարում: Եերբ շարժվում է զնացքը, նա հաղթահարում է ողի դիմադրությունը, անիլների շփումը (քսվելը) ու լսներին, այլև նույն անիլների շփումը իրենց առանցքներին: Աշխատանք կատարվում է նաև ծառը կամ յերկաթը ծոելիս, զսպանակը ձգելիս և առհասարակ վորեւ բան կտրելիս կամ ջարդելիս: Բոլոր այդ դեպքերում ել աշխատանքը կարելի յե չափել կիլոդրամոմետրներով:

Դուք տեսնում եք այնտեղ, հարեւան սենյակում գրված է ինքնայեռը և նրա ջուրը յեռում է: Եեռումը կայանում է նրանում, վոր ջրի մասնիկները քայլքայլով, դառնում են դոլորչու շատ փոքր մասնիկներ,

Վորոնք մարտու աչքի համար անտեսանելի յեն: (Այն
գոլորշին, վոր մենք տեսնում ենք, արդեն այն գոլոր-
շին ե, վորը ստուել ե և գտուել ջրի մանր կաթիլներ):
Յեռման ժամանակ, ջրի մասնիկների մեջ աշխատանք ե
կատարվում, վորը մենք կացող են չափել: Պարզվում
ե, վոր մի դրամ ջուրը գոլորշի դարձնելու համար
պետք ե ծախսել մոտավորապես 230 կիլոգրամոմետր
աշխատանք, այսինքն մի աշխատանք, վորն անհրա-
ժեշտ ե 230 կիլոգրամ ծանրությունը (մոտ 20 վերը
ջուրը) մի մետր բարձրացնելու համար և կամ ընդհա-
կառակի՝ մի կիլոգրամը 230 մետր բարձրացնելու հա-
մար:

Չուրը յերկու գագերի, այն ե, ջրածնի և թթվածնի
միացումն ե: Այլ յերկու գագերն ել մտնում են ողի
բաղադրության մեջ—թթվածնը բավական մեծ քա-
նակով, իոկ ջրածնը չնչին քանակով: Տարբեր միջոց-
ներով կարելի յէ ջուրը տարբալուծել իր բաղկացուցիչ
մասերին, այսինքն՝ թթվածնի և ջրածնի: Դրա համար
պետք ե ծախսավի վրայ աշխատանք: Պարզվել ե, վոր
մի գրամ ջուրը թթվածնի և ջրածնի տարբալուծելու
համար պետք ե ծախսել 1.600 կիլոգրամոմետր աշխա-
տանք, այսինքն այնպիսի մի աշխատանք, վորը կա-
տարվում ե 16 կիլոգրամ ջուրը 100 մետր (մոտ 50 ոտ-
քեն) բարձրացնելիս:

Հիշում եմ, ընկ. Կարապետյան, վոր յերեկ նույն-
պես խորվում եր մեքենայի աշխատանքի և նրա չափե-
լու մասին: Բայց այն ժամանակ խորվում ելին ինչ վոր
ուրիշ չափերի մասին և վոչ թե կիլոգրամոմետրների—
ասաց մանայոր Միքայելյանը:

— Շատ հնարավոր բան ե. այսինիկայի մեջ, իրոք
աշխատանքը չափում են վոչ թե կիլոգրամոմետրներով

14

այլ ուրիշ չափերով: Մեքենաներ կառուցելիս տեխնիկ-
ները սովորաբար հետաքրքրվում են վոչ այն լրիվ աշ-
խատանքով, վոր մեքենան կարող ե կատարել մինչեւ
վոր վերջնականապես անպետքանա, այլ այն աշխա-
տանքով, վոր կարող ե մեքենան կատարել ժամանակի
մի միավորի ընթացքում. — մի ժամում, մի բողեյում,
կամ մի վայրկանում:

— Դա միանգումայն հասկանալի յէ,—ընդհատեց
տեխնիկական զեկավարին մանայոր Միքայելյանը, —
մեքենան կարող ե կանոն ունենալ վորեւ փչացման հետե-
ղանքով և կամ վառելիք չլինելուց: Դրա համար ել,
մեքենայի ամբողջ աշխատանքն առաջուց հաշվել դրժ-
կար ե: Այն ինչ, միշտ ել կարելի յէ իմանալ, թե
ինչպիսի աշխատանք ե մեքենան կատարում մի միա-
վոր ժամանակում, մի ժամում, մի բողեյում, կամ մի
վայրկանում:

— Միանգումայն ճիշտ ե, ընկ. Միքայելյան: Յե-
րեւում ե, այդ բանը լավ ես հասկացել և ինձ ել կար-
գին ոգնեցիր: Հենց գրա համար ել, տեխնիկայում
ընդունված ե չափել այն աշխատանքը, վոր մեքենան
կատարում ե ժամանակի մի միավորի, ասենք, մի
վայրկանի ընթացքում: Այն աշխատանքը, վոր մե-
քենան կատարում ե ժամանակի մի միավորի ընթաց-
քում, կոչում ե մեքենայի կարողություն: Տեխնիկա-
յում ընդունված ե կարողության միավոր հաշվել այն
աշխատանքը, վորը պետք ե ծախսել մի վայրկանի
ընթացքում 75 կիլոգրամը մի մետր վերև բարձրացնե-
լու ժամանակը: Այդ աշխատանքը անվանում են ձիու-
ութ (մեկ ձին կարող ե կատարել մոտավորապես այդ-
պիսի աշխատանք): —

Մեկ ձիու ուժը հավասար է 75 կիլոգրամոմետրի

15

մի վարկյանում : Պարզ է , վոր մի ձիու ուժանոց մեքնայի մի ժամում կատարած աշխատանքը հավասար կլինի $75 \times 60 \times 60 = 270 \cdot 000$ կիլոգրամութը մեկ ժամում : Գիտության մեջ (Փիզիկայում) , կարողությունը չափելու համար բնդունվում եւ չառ ավելի փոքր մի չափ , այն և մի երգ մի վայրկյանում : Այդ մոտավորապես այն աշխատանքն է , վորը մի վայրկյանի ընթացքում կատարվում եւ մի միլիոնամ ծանրությունը մի ամստիմետր բարձրացնելիս :

Ի նկատի ամսելով այդ աշխատանքի չափազանց փոքր լինելը , Փիզիկայում կարողությունը չափելու համար գործածում են մի չափ , վորը $10 \cdot 000 \cdot 000$ անդամ մեծ եւ վերօնիչյալ չափից և կոչվում եւ ՎԱՏՏ (անգլիացի մեխանիկ Ուատուի անունով , վորը կատարելագործել եւ առաջին չոպեմեքնան) :

1 վատտը= $10 \cdot 000 \cdot 000$ երդի : Բայց այդ չափն ել շատ փոքր եւ դրա համար նրա տեղը հաճախ գործածում են մեկ կիլովատտը= 1000 վատտ= $10 \cdot 000 \cdot 000 \cdot 000$ երդ վայրկյան (հետո համեմատելով դուսն , վոր մեկ ձիու ուժը= 736 վատտի) :

Ընկերներ , արդեն ուշ եւ , դուք ել , տեսնում եմ , արդեն հոգնել եք անվերջ թվեր լսելով , մինչդեռ յետ զեր նոր-նոր եմ մոտենում Պետրոսյանի մեքենայի հարցին : Ուրիշ միջոց չկա , մնում եւ մեր զրույցը հետաձգել վաղը յերեկոյան : Խոլ վաղը յես խոստանում եմ այդ հարցը վերջնականակիս լուծել :


— Լավ , թող այդպիս լինի , ընկ . կարապետյան . վաղը կհավաքվենք նորից հենց նույն ժամին և կը լսենք , թե ինչպես պետք եւ զույց տառ , վոր Պետրոսյանի մեքենան իրականացնելի բան չե :

56816 - 6

Մյուս որը յերեկոյան ուղիղ ժամի 7-ին տեխնիկական դեկավարը յեկայ ակումբ : Մենյակում հավաքվել եյին շատ ավելի մեծ թվով բանվոր ունկնդիրներ , քան յերեկ կային : Նրանք լսել եյին ընկերներից , վոր տեխնիկ կարապետյանը բանվորների հետ խոսում եւ Պետրոսյանի մեքենայի մասին : Բոլորն ել հետաքրքրվում եյին այդ հարցով , ուստի և բոլորն ել յեկել եյին վերջնականապես իմանալու , թե բանն ինչումն ե : Կարապետյանը մի քիչ չփոթվեց , տեսնելով հավաքվածների մեծ թիվը , բայց իրեն հավաքեց և խկույն անշավ գործի :

— Այն ամենը , ինչ վոր յերեկ ասացի , այսոր հընարավորություն չկա կրկնելու նոր հավաքված ընկերների համար : Այդ մեզանից շատ ժամանակ կիսվի և բացի գրանից յերեկվա յեկաներին հետաքրքիր չի լինի : Յես միայն համառոտ կերպով կհիշատակեմ յերեկվա ասածա : Մենք յեկան այն յեղակացության , վոր ամեն մի աշխատանք , —ուզում ե մարդունը լինի , կենդանումը թե մեքենայինը , —չափվում ե կիլոլորամումետրով : Աշխատանքի մեծությունը կստացվի , յերբ մենք ազգող ուժի մեծությունը (մեր որինակների մեջ—ծանրության քաշը) բազմապահենք այն ճանապարհով , վորը կանցնի աշխատող մարմինը ուժի ազգման ուղղությամբ : Պատկերացրեք ձեզ , վոր մենք յերկու կիլոգրամանոց քաշը թելին ամրացնելով , բարձրացրել ենք 10 մետր : Վո՞րչափ աշխատանք կկատարենք այդ զեղությում :

— Յերկուաը բարձմապատկած տառով , այսինքն , քսան կիլոգրամութետր , —ուզում լուղությունը մեկը :



— Լավ, — շարունակեց Կարապետյանը, — ուղեմն բարը բարձրացնելիս 20 կիլոդրամոմետր աշխատանք և հատարթել: Իսկ Հիմա յեկեք կտրենք այն թելը, վորը պահում եք այդ քարը վերեռում: Ինչ կպատահէ քարի հետ:

— Դրանից եւ պարզ բան, — ասած Գողթունին, — քարը կընկնի դեռնին:

— Ուղիղ եւ, կընկնի: Գետին ընկնելու ժամանակ այդ յերկու կիլոդրամ քաշ ունեցող քարը մինչև դնախնմալը, կամցնի նույն ասարածությունը, վորքան նա բարձրացել եր, այսինքն 10 մետր: Ուղեմն, քարն եր ընկնելու ժամանակ կկտարեն 20 կիլոդրամոմետր աշխատանք, այսինքն նույն աշխատանքը, վորը մենք ոկորում կտարարել ելինք քարը 10 մետր բարձրացնելիս: Ուրիշ խոսքով առած, քարը, վորը բարձրացվում ե վերև և կախ ե տված թելից, աշխատանք կտարելու ընդունակություն ե ստանում: Մեդ մնում ե թել կտրել, քարը կսկսի ընկնել և խակապես աշխատանք կտարարել: Ամեն մարմնի (մեր որինակում — քարի) այդ ընդունակությունը, վոր վորոշ պայմաններում նա աշխատանք է կտարարում, կոչըլում ե մարմնի եներդիտ: Բարձրացրած քարի եներդիտն չափում են այն աշխատանքով, վորը ծախտիած եր նրան վերև բարձրացնելիս: Ուղեմն, զաւոր յեկայի, վոր յերկու կիլոդրամ քաշ ունեցող քարը 10 մետր վերև բարձրացներուց հետո ստանում ե այնքան եներդիտ, վորը հավասար է 20 կիլոդրամոմետրի: Քարն, ուղեմն, ստանում ե եներդիտի վորոշ պաշար և յերբ նա սկսում է ընկնել, այդ գեպիտմ աշխատանք է կտարարում, որինակ հաղթակարում ե ոգի դիմադրությանը այդ պաշարի հաշվին: Պատեհվացրեք ձեզ, վոր այր քարի ընկնելու օս-

նալարհին, որինակի համար, դեմնից հինգ մետր բարձրության վրա գուռք մի տախտակ եք տեղավորել: Տախտակին հասնելով, քարը կդադարի ընկնելուց հետին հինգ մետր բարձրության վրա: Ի՞նչ աշխատանք կկտարե քարը՝ հասնելով մինչև տախտակը:

— Միայն տասը կիլոդրամոմետր, — պառասխանեց բողներից մեկը, — քարի քաշը յերկու կիլոդրամ ե, իսկ նրա անցած տարածությունը հինգ մետր ե:

— Ուղիղ ե, — շարունակեց Կարապետյանը: Ի՞նչ եք կարծում, քարը ծախսեց իր եներդիտի այն ամբողջ պաշարը, վոր ստացել եր 10 մետր բարձրացվելիս:

— Վոչ, չծախսեց, միաժամանակ պատասխանեցին շատերը: — Նա ստացել եր 20 կիլոդրամոմետր, իսկ մինչև տախտակին ընկնելիս միայն 10-ը: Կնշանակե, նրա մեջ դեռ նախկին պաշարի կեսը մնում է չըծախսված:

— Լավ, յեկեք հիմա քարի տակից տախտակը հեռացնենք, ինչ կպատահէ քարը հետ:

— Կընկնի ներքել ե կհասնի դեռնին, — ձայնեցին բորբը:

— Շատ լավ, — ուղեմն նա կանցնի մնացած 5 մետրը ել և արլավիսով կսպասի իր ամբողջ պաշարը: Համեմով դեռնին, քարն այլու վոչ մի եներդիտ չի ունենա իր մեջ: Նա ամբողջ ստացած եներդիտին ծախսեց: Այլպիսով ուրեմն, քարը գետնին ընկնելիս, ամբողջությամբ ծախսեց այն եներդիտին, վորը նա ըստացել եր վերև բարձրացնելիս:

Նույնը, ընկերներ, կկտարարվի նաև պատահակի հետ, յեթե նրա մի ծայրը ամբացնելով պատին, սկսեք մյուս ծայրից ձգել: Զարգանակի ձգելով պատ-

տանք եք կատարում և նրան եներդիայի վորոշ պաշար հաղորդում: Զսպանակի ձգման համար ծախալած աշխատանքը, հետևապես նաև ստացած եներդիան, կարելի յէ չափել կիլոզրամոմետրներով: Զգված գրության մեջ զսպանակն ընդունակ է աշխատանք կատարելու, այսինքն եներդիայի վորոշ պաշար ունի: Յերբ գուք թողնեք զսպանակի մյուս ծայրը, նա կկարծանա, կակսի կծկվել: Կծկվելով, այդ զսպանակը կկատարենույն աշխատանքը, վորը գուք դործադրեցիք նրան ձգելու համար:

Բնության մեջ պատահում են եներդիայի տարբեր տեսակներ և ձևեր:

Ամեն մի մարմին, վոր գտնվում է շարժման մեջ, ձեռք և բերում, այսպես կոչված, կինետիկ կամ շարժիչ եներդիա: Կայարաններում վաղոնները իրար հետ կապողները (ըզեպպիկ) արդ բանը լավ են իմանում: Շոգեշարժը մոտեցնում են զնացքին և հրում նրան վագոնները, ստացած շարժիչ եներդիայի շնորհիվ, գլորվում են ուելսերի վրա, իսկ շոգեշարժը վերադառնում է իր տեղը: Վաղոնները ուելսերի վրա շարունակում են գլորվել այնքան ժամանակ, մինչեւ վոր սպառում են ստացած եներդիայի ամրող պաշարը: Իսկ այդ պաշարը ծախալում է այն պատճառով, վոր շարժվող վաղոնները հաղթահարում են ողի դիմադրությունը, անիվների շփումը ուելսներին և իրենց առանցքներին: Քննության առնենք եներդիայի մի ուրիշ տեսակը, ևս, այսպես կոչված ջերմային եներդիան: Սրանից մոտ 100 տարի առաջ, յևնթավրում եյին, վոր ամեն մի տաքացած մարմնի մեջ դոյությունը ունի մի նյութ, վորը և առաջ է բերում ջերմություն: Նրան անվանեցին «ջերմածին»: Միայն 19-րդ դար

սկզբում վերջնականապես ձեռք քաշեցին այդպիսի ֆանտազիաներից (յերեվակայական բաներից): Վոչ մի «ջերմածին» դոյություն չունի, այլ խնդիրը բոլորվին ուրիշ բանի մեջ է: Դուք հավանաբար լսել եք, վոր ամեն մի նյութ բաղկացած և չառմեծ թվով չափաղանց մանր մասնիկներից: Նրանք կոչվում են մոլեկուլներ: Մոլեկուլներն ել բաղկացած են աստմներից: Այդ մասնիկներն այնքան փոքր են, վոր մի խորանարդ սանտիմետր ողի մեջ կա 2.700.000.000.000.000.000 մոլեկուլ, այսինքն 2700 յուրիլոն այլպիսի մասնիկներ: Յեթե մենք մի խորանարդ սանտիմետր ողում պարունակված բոլոր մասնիկները իրար կողքի շարենք մի թելի վրա, ապա այդ թելերով հնարավոր կլինի մեր յերկաղունդը հասարակածի ուղղությամբ 12-ից ավել անդամ փաթաթել¹⁾: Այդ մասնիկները նյութի մեջ շարունակ շարժման վեճակումն են գտնվում: Նրանք տեղափոխվում են և շարժվում են զանազան ուղղություններով: Սակայն ամեն մի մասնիկ այնքան փոքր է, վոր նյութի յուրաքանչյուր մի խորանարդ սանտիմետրում նա կարող է իր սեփական մեծությունից հազար անդամ ավելի մեծ տարածություն թույլավոր և ապա միայն հանդիպել մի ուրիշ մասնիկի: Վորով դեսպերում այդ մասնիկների շարժումները ակտում են ուժեղանակ: Այլպիսի ժամանակ, ձեռք տալով մարմնին, դգում ենք, վոր նա տաք է: Ուրիշ խոսքով ասած, այն տաքությունը, վոր մենք դգում ենք մարմնին դիսէլիս, այլ բան չե, քան մարմնի մասնիկների շատ արագ շարժումը հենց մարմնի մեջ: Յերբ այդ մարմնիները շարժվում են, նրանք ձեռք են բերում շարժիչ եներդիան. վորքան արագ են

¹⁾) Յերկագնդի հասարակածի յերկարությունը հավասար է 40.000 կիլոմետրի:

Նրանք չարժիում, այնքան մեծանում և նրանց կիսետիկ եներգիան:

Այդպիսով ուրեմն, ընկերներ, զուք առնում եք, զոր ամեն մի նյութի կամ մարմնի մեջ ջերմությունը փորոշում և մարմնի մեջ չարժվող մասնիկների կիսետիկ եներգիայով: Մարմնի տաքացման աստիճանը (նրա տեմպերատուրան) մկում է այնքան բարձրանալ, վորքան մեծանում և մասնիկների կիսետիկ եներգիան: Հենց տաքացած մարմնի եներգիան է, զոր կոչվում է ջերմացին եներգիա: Զերմային եներգիան չափելու համար ևս ընդունել են առանձին չափ, զոր կոչվում է կալորիա: Կալորիա կոչվում է ջերմացին եներգիայի այն քանակը, վար հարկավոր և հաղորդել մի կիրամ ջրին, փորակապի նա տաքանա մի աստիճան ըստ Ցելսիոսի ջերմացափի: Յեթե պետք է մի աստիճան տաքացնել զուչ թե մի կիրողամ ջուրը, այլ 5 կիրամ, ապա պահանջվում է ջերմության 5 կալորիա, եսկ վորակեափի 5 կիրողամ ջուրը տաքացնենք զուչ թե մեկ, այլ 50 աստիճան, ապա պահանջվում է $5 \times 50 = 250$ կալորիա ջերմացին եներգիա: Զափումները ցույց են տվել հետեւյալը:—մի կիրողամ ջուրը յեսացնելու համար, իսկ հետո յել ամբողջ ջուրը դուրսչեք դարձնելու համար պահանջվում է 640 կալորիա ջերմացին եներգիա: Բնության մեջ համարյա բույր մարմինները պինդ, հեղուկ և գաղացին մի առողտիճան տաքացնելու համար պահանջվում է նա ավելի քիչ ջերմացին եներգիա: Բնության մեջ համարյա բույր մարմինները պինդ, հեղուկ և գաղացին մի առողտիճան տաքացնելու համար պահանջվում է 1,25 կալորիա:

1) Բացառության են կաղմամատ ջրածինը. նա պահանջվում է մի աստիճանի համար 3,4 կալորիա և հելիումը. զուր պահանջվում է 1,25 կալորիա:

Խպասիր մի բռպե, ընկեր տեխնիկ, — վեր թռավ տեղից Միքայելյանը:—Յեղբայր, ինչ մոր մի բան ինձ պարզ չմնաց: Առաջ դու ասում եյիր, մոր ամեն տեսակ աշխատանքն ու եներգիան չափում են կիրողամություններով, իսկ հիմա ջերմացին եներգիայի համար մեջ ես բերում նոր չափ:—կարծիան: Դուքս և դալիս, զոր եներգիայի ամեն մի տեսակի համար գոյություն ունի իր առանձին չափը: Այդ լինչպես կլինի:

— Քո հարցն ուզիղ ե ի իս ուզզակի և պարզ կապատասխանիմ: Եներգիայի ամեն մի տեսակը կարելի յե չափել հատուկ չափերով, բայց կարելի յե նրան չափել նաև կիրողամություններով: Յես ձեզ հիմա կպատմիմ, թե ինչպես և այդ տեսակ փորձը խսկապես արմիլ: Միայն սպասեցեք մի բովել հանդստանամ: Տեհնիկական զեկավարը մի քանի կում զարեծուց խմելուց հետո, չարունակեց իր պատմությունը:

Դեպքն արագես ե: Մոտ հարյուր քսան հինգ տարի սրանից առաջ բավարական կառավարությունը Անդրբայրից հրավիրեց իր մոտ մշտական ծառայության մի գործունյա և կրթված ամերիկացու, զորի անունն եր Բնեմամեն Տումանյան, վորն հետազայում կոչվեց Ռամիքորդ: Կառավարությունը հանձնարարեց նրան զեկավարել ուղմական գործերը: Մի անգամ Ռամիքորդն առիթ ունեցավ տեսնելու, թե ինչպես են ծակում թնդանոթը: Նա նկատեց վոր մետաղը և խարսխած կտորները անսովոր տաքություն ուտացան: Յանկանալով փորձով ստուգել թե իրո՞ք մետաղի ջերմածինն է հանդիսանում տաքացման պատճորը, Ռամիքորդն այդպիսի չափությունը:

զլանը։ Ծակեցը պտտելու համար ձիռ ուժ ելին բանցնում։ Արկդում յեղած ջրի քանակը նախորոք ճշշտորեն չափված եր։ Յերկու ու կես ժամ աշխատելուց հետո Ռամֆորդը գարմանքով նկատեց, վոր ջուրն արկդի մեջ յիռում է. շարունակելով պտտելը, նա տեսալ, վոր ջուրը դուրս չէ դառնում։ Ռամֆորդը հետաղաբաւմ իր առջ փորձի հաշվեալության մեջ այսպես է զըռում. «ՊԺվար և նկարագրել այն դարմանքը, վորը նկատեց բոլոր ներկաների դեմքին, յերբ այդքան շատ ջուրը (19 ֆունտ) յեռման առտիճանի հասալ առանց կրակի ողնության»։

Այդ փորձի և մի շարք չափումների հիման վրա, Ռամֆորդը յեղբակացրեց, վոր ջերմությունը վոչ մի դեպքում նյութ չի կարող լինել։

Թնդանոթը ծակելիս տուրությունն ավելի մեծանում եր, մինչդեռ ամեն մի նյութ, մարմնի մեջ կարող ե զմնվել միայն վորոշ քանակությամբ և վոչ մի կերպ ավելանալ չի կարող։ Բայց այդ Ռամֆորդը փորձեց հաշվել, թե ինչքան մեխանիկական աշխատանք ե Հարկավոր, վարպետի ջուրը յեռա արկդում։ Մակայն նրա ստացած թիվն այնքան ել ճիշտ չեր։

Այդուհանով Տօմասոնը (Ռամֆորդը) ցույց տվեց, վոր մեխանիկական եներգիան պուշտում է ջերմային եներգիայի։

Մակայն բացի մեխանիկական եներգիայից, բնության մեջ ուստահում են եներգիայի նաև ուրիշ տեսակները՝ մագնիսական, ելեկտրական, քիմիական և այլն։ Մագնիսային յերկաթահանքը^{*}), վորը պատահում է բնության մեջ, ընդունակ ե զեղութիրեն յերկաթ ձուելու։ Ասում են, վոր նա ոժտված


^{*}) Магнитный железняк—магнитная масса в кубах по фунтам.

և առանձին եներգիայով —մագնիսական եներգիայով։ Եերբ լարերի միջոցով ելեկտրական հոսանք և հոսում, վորը հաղորդվում է ելեկտրաշարժիչին, վերջինս ուսումն է պտտմել։ Նշանակում է, հաղորդալարերը, վորոնցով անցնում և հոսանքը, ոժտված են ելեկտրական եներգիայով։ Վերցրեք ծծմբաթթու պարունակող մի աման։ Խառնեցեք այդ ծծմբաթթուի հետ ջուր և դուք կտեսնեք, վոր ամանը կական տաքանալ։ Տաքացումը տեղի ունեցավ նբանից, վոր ծծմբաթթուի մեջ ինչ վոր տչխառնաք կատարվեց։ Մենք ասում ենք, վոր ծծմբաթթու պարունակող ամանում կա մի առանձին եներգիա՝ քիմիական եներգիա—և այլն։

1842 թվին գերմանացի բժիշկ Յուլիոս Ռոբերտ Մայերը առաջնորդ հայտնեց այն միտքը, վոր յուրաքանչյուր եներգիա, —ինչ տեսակի ել այն լինի, —կարող ե փոխվել եներգիայի բոլոր հնարավոր մյուս տեսակներին։ Այդ անցքան ժամանակ մի տեսակի եներգիայի ծախսված ամրող քանակը պետք է ցշտությամբ հավասար լինի մյուս տեսակի նոր սուած յեկած եներգիայի քանակին։ Այդ մենք տեսանք թնդանոթը ծակելու փորձի մեջ։ Մեխանիկական եներգիան չքացավ, իսկ նրա տեղ առաջ յեկավ ճիշտ նույն քանակությամբ ջերմային եներգիային (ջուրը տաքացավ)։ Մայերը ցշտությամբ հաշվեց, թե ինչքան մեխանիկական եներգիա պետք է ծախսել, վորպեսզի ստացվի ջերմացին եներգիայի միավոր (մեկ կարորիա)։ Թեև նրա հաշիվն իսկական պատասխանին ավելի մոտ էր, քան Ռամֆորդինը, բայց միանգամայն ճիշտ չեր։ Արինակի համար, յեթե հոսանքը ելեկտրական եներգիան ձեվափոխում է մեքենայի մեխանիկական աշխատանքի, ապա Մայերի կարծիքով, ծախսում է ճիշտ այնքան ելեկտրական եներ-

Դաս, վորքտն մեխանիկական (շաբժիչ) հնիքիա յի ըստացվում մեքենայից :

Յերբ Մայերը առաջին անդամ իր մտքերը հազորութեց այն ժամանակի մի գիտնական ամսագրի խմբութիւն, վերջինս չուզեց ընդունել նրանց ճշությունը և տեղ չուզեց իր ամսագրի եջերում : Գուցեց զբա պատճառը այն եր, վոր Մայերը իր կարծիքը մշուշազուա ձե-



Ստեփենսոնը 1814 թվին ընթացքի զցեց իր առաջին շոգեարժը վոր հայտնել և բացի այդ, իր մտքերի մեջ վարուակուայթույթիներ եր թույլ տվել ընդունեմ ֆիզիկայի ու շեքսիրի, վորը չեր կարող նրան ներել զիտնական խըմբագիրը :

Սիայն իր կյանքի վերջին տարիններում Մայերին հաջողվեց բնուածնել տալ իր իղեալները (մտքերը) և

նրան սկսեցին մեծարել վորպիս իսկական պիտնական :

— Գուցեց և մեր խեղճ Պետրոսյանի լիճակին եւ այդպիս ե լինելու, — ընդհատեց լողոներից մեկը : — Մարդու կարող և պատահել, ճիշտ ե մտածել իր մեքենայի կառուցվածքը, միայն թէ չի կարողանում բացատրել :

— Զեմ կարծում, — պատասխանեց տեխողեկը, — և յենթադրում եմ, դուք ևս դրանում կհամոզվեք : Յերբ Մայերի միտքը հայտնի դարձավ, շատերն սկսեցին դրալվել նույն հարցով : Արդյունաբերությունն այն ժամանակ արդեն սկսել եր զարդանալ : Շողեմեքենաներն այն ժամանակ լայն գործադրության մեջ եյին :

Առաջին շողենավը 1807 թվին ճեղքեց ամերիկական Հուգոն դեսի ալիքները, վորի վրա յի գտնվում Նյու-Յորքը : Ստեփենսոնը 1814 թվին գործի դցեց իր առաջին շոգեշարժը, իսկ 1830 թվին Անդիայում արդեն ընդհանուր ոգտագործման համար բացվեց առաջին յերկաթուղարյին հազորդակցությունը Լիվերպուլ և Մանչեստր քաղաքների միջին : Նույն այդ տարիներում կառուցվեց առաջին մաղնիսա-ելեկտրական մեքենան : Մայերի կարծիքը, վոր մի վորեկ տեսակի եներդիա ամբողջությամբ և լինի կերպով կարելի յի դարձնել ուրիշ տեսակ եներգիա, — լայն ընդունելություն գրաւածի : Բուռն հետաքրքրություն առաջացավ դեպի այդ միտքը : Այդ հնարավորությունը բաց եր անում նոր, հարուստ հնարավորություններ արդյունաբերության զարգացման համար : Շատ դիտնականներ սկսեցին բորբագվել եներգիայի ձեվափոխման հարցով, կատարելով ամենածիշտ փորձեր և հաշիվներ : Դանիացի ինժեներ Կոլբինդի, Անդիացի Զուլի և գերմանացի մեծ գիտնական Հելմհոլցի ջանքերով խկապես հաստատվեց, վոր եներգիայի ամեն մի տեսակը վորոշ պայմաններում կա-

քող ե փոխվել և դառնալ ուրիշ տեսակի եներգիա: Այդ
անցման ժամանակ առաջ ե դալիս նոր տեսակի եներգիա
ճիշտ այն քանակով, վորքան ծախսված եր եներգիա
սկզբնական տեսակից: Մեխանիկական (չարժիչ) ե-
ներգիան կարող ե դառնալ ջերմային, ջերմայինն իր
հերթին՝ մեխանիկական: Մեխանիկականը դառնում ե
ելեկտրական, դինամո-մեքենայի խարսխի պտտումը
տալիս ե ելեկտրական հոսանք, և ելեկտրական եներ-
գիան դառնում ե մեխանիկական: — Ելեկտրական հո-
սանքը աշխատեցնում ե զործարանի մեքենաները,
շարժման մեջ ե զնում (բանեցնում ե) ելեկտրաքարշերը
(տրամվայները): Ելեկտրական եներգիան կարող ե
դառնալ քիմիական եներգիա, ելեկտրական հոսանքով
կարելի յե, որինակի համար, տարրալուծել ջուրը --
ջրածնի և թթվածնի, ելեկտրական եներգիան դառնում
է ջերմային և լուսային (ուրիշ կերպ ասած - ձառագայ-
թային) եներգիա, ելեկտրական հոսանքը չիկացնում ե
(կարմրացնում ե) ելեկտրոլամպի թելերը, իսկ լամպը
տալիս ե լույս:

Զուլը կատարեց ամենաճիշտ փորձերն ու չափումնե-
րը, վորպեսով հաշվեր, թե ինչքան և հարկավոր ծախ-
սել մի տեսակի եներգիա, վորոշ քանակությամբ մյուս
տեսակի եներգիա ստանալու համար: Պարզվեց, վոր
յեթե 1 կիլոդրամ քաշ ունեցող վորոն մի մարմին ներքե-
րնկնի 427 մետր բարձրությունից, ապա այդ ժամանակ
կատարված աշխատանքը ընդունակ ե մեկ կիլոդրամ
ջուրը մի աստիճան տաքացնելու: Վերջին առաջին
մեկ կալորիան = 427 կիլոդրամովետրի և հա-
մարկակը,

կիլոդրամովետրով: Առաջին դեպքում մենք ասում
ենք, վոր մի կիլոդրամ ջուրը մեկ աստիճան տաքա-
ցնելու համար հարկավոր ե մի կալորիա եներգիա: Իսկ
յերկու համար հարկավոր ե մի կալորիա եներգիա: Համ-
արկությունը դեպքում մենք ասում ենք, վոր մի կիլոդրամ
ջուրը մի աստիճան տաքացնելու: Համար հարկավոր ե
ջուրը մի աստիճան տաքացնելու: Համար: Մի դեպքում՝ չս-
տագինը կալորիայով, իսկ յերկությունը դեպքում՝ կիլո-
դրամովետրով:

— Յեթե յես քեզ ուղիղ հասկացա, ընկ. Կարա-
պետյան, ապա այսուղ նույն ե, ինչ վոր այն դեպ-
քում, յերբ միենույն յերկարությունը չափում են մեկ
մետրներով, մեկ եւ արշիններով: — այդպես չե՞՝, —
հարցըց լուղներից մեկը, ընկ. Սիմոնյանը:

— Միանդամայն ուղիղ ես հասկացել: Յեկ ճիշտ
այնպես, ինչպես ասում ենք, վոր մեկ մետրը = 22½
մերշոկի, կարող ենք ասել, վոր
մեկ կալորիան = 427 կիլոդրամովետրի և հա-
մարկակը,

$$1 \text{ վերշոկը} = \frac{1}{22} \cdot \frac{1}{2} = \frac{2}{45} \text{ մետր}.$$

$$1 \text{ կիլոդրամովետրը} = \frac{1}{427} \text{ կալորիակի},$$

Ելեկտրական եներգիան սովորաբար չափում են կիլո-
դրամ-ժամերով: Անցյալ անդամ յես ասեցի, վոր կիլո-
դրամ-ժամով չափվող եներգիան հեշտ ե դարձնել ձիռ-
ուժամերի, իսկ հետո յեւ՝ կիլոդրամովետրների:

կնշանակե, ելեկտրկ. եներգիան ել կարելի յէ չափել կերպամոմետրներով: Ճիշտ այլպես կարելի յէ կիրարամոմետրներով չափել և մասուդայթային (լուսային), քիմիական և առհասարակ ամեն տեսակ եներգիա:

Բնության մեջ բոլոր մարմիններն ունեն անհաշիք տարրեր ձեվեր. պատահում են խորանարդներ, զնդեր, դլաններ, բուրգեր և այլն: Նրանք բոլորն ել ունեն մի ընդհանուր հատկություն:— տեղ բոնել տարածության վրոշ մասում, ինչպես ասում են, ունեն վորոշ ծավալ: Զնայած բնության այլ մարմինների տարրեր ձեվերին, նրաց ծավալները կարելի յէ չափել միենույն չափով, որինակ, խորանարդ սանտիմետրով: Ճիշտ այլպես ել բնության բոլոր մարմինները վորոշ պայմաններում ունեն մի ընդհանուր հատկություն, —կատարել աշխատանք, այսինքն ունեն եներգիա և այդ եներգիան, չնայած նրա տարրեր տեսակների, կարելի յէ չափել մի ընդհանուր չափով, որինակ, կիլոդրամոմետրով:

— Բայց դու, ընկ. Կարապետյան, այնուամենայիլ համբերությունից հանեցիր մեզ, — կես կատակ, կես լուրջ տեղից ձայնեց հնոցապան ընկ. Գողթունին: — Մենք քեզ մի ամբողջ յերեկո լսեցինք, բայց դու վոչ միայն համառոտ կերպով, այլև մի քիչ ուրիշ խոռոչ-այլ, մինչև անգամ այն որենքի մասին մի բան չաստցիր, վորի մասի սկզբում խոսում եյիք:

— Սխալվում ես բարեկամ, — Հանդիստ պատասխանեց նրան տեխնիկական գեկալպարը, — յես արդեռ հասել եմ թե մեքենային և թե որենքին: Թույլ տուք ժիայն համառոտ կերպով, այլև մի քիչ ուրիշ խոռոշով, կրկնել այն յեզրակացությունները, վորոնց մենք յեկանք յերեկ և այսոր:

Հիշում եք այն բոլորն, ինչ վոր յերեկ յես ձեզ առաջի: Յես անացի, վոր վերև բարձրացած քարը ձեռք երեսմ աշխատանք կատարելու ընդունակություն, այսինքն՝ պահում և եներգիա: Յերբ այդ քարը ընկնում է գետին, նա կատարում է ճիշտ այնպիսի աշխատանք, վորպիսին ծախսված: Եր նրան վերև բարձրացնելիս: Յեթե քարը սկզբից վերև բարձրացված չլիներ, ապա նա աշխատանք կատարելու վոչ մի ընդունակություն չեր ունենա, այսինքն եներգիայի վոչ մի պաշար չեր ստանա, այլ կշարունակեր գարերի ընթացքում գետնի վրա ընկած մնալ: Յեղրակացությունը պարզ է: — Վոր պեսզի քարն աշխատանք կատարի, նրան անհրաժեշտ և սկզբից եներգիա: Յեթե մենք, որինակի համար, կամ ենում ենք, վոր զավանակն աշխատանք կատարի, առենք, ծածկի գետի միջանցք տանող ահա այս յելքի զուսը, անհրաժեշտ է, վոր մենք նրան նախեւուած ձգենք: Իսկ զավանակի ձգումը տեղի յէ ունենում, ինչպես դիմեք, գուսէր ըանալու ժամանակ: Զգված վեճակում զավանակն աշխատելու ընդունակություն ունի: Դրանից հետո զավանակը կսկսի ձգվելուց առաջ յեղած վիճակը վերականգնել, և զուսը կփակվի: Հաշիվները շուշց են տվել, վոր սեղմելիս զավանակն այնքան աշխատանք և կատարում, վորքան նա ստացել եր ձգման ժամանակ:

Մի ուրիշ որինակ ևս: — սկզբում յես ձեղ պատմեցի, թե ինչ ձեմով թամֆորդը ծակեց թնդանոթը, վորի ծայրը դրված եր ջրի մեջ: Զուրն այդ պրոցեսից սկսեց տաքանալ: Ծակերը շփմելով թնդանոթի մետաղին, տաքացրեց նրան, իսկ վերջինս իր հերթին տաքացրեց լուրը: Մետաղի և ջրի տաքացման համար ծախալց այնքան եներգիա, վորքան ծախսված եր թնդանոթը

ծակելու համար : Յեթէ մամֆորդը թնդանոթը չծակեր, ապա ջուրն ևս չեր տաքանա : Մետաղի և ջրի չերմային եներգիան, ինչպես առում են, յերևան յեկավ (առաջա-թույլ կերպով տաքացան և' հատակը, և' բաժակի կը-ցավ) թնդանոթը ծակելու մեխանիկական եներգիայի հետեւանքով : Ճիշտ այլպես ել, ընկերներ, տեղի յի ու-նենում բոլը զետքերում : Յեթէ վորեն մարմին ելեկ-տրականացած և լինում, ապա այդ նշանակում և, վոր նախորոք կատարվել և ինչ վոր աշխատանք, վորի չնոր-չիվ ել մարմինն ստացել և ելեկտրական եներգիա : Մի խոսքով, բնության մեջ գործող բոլոր ուժերի և եներ-գիայի վրա կատարված հետաղոտությունները ցույց են տվել, վոր եներգիայի ամենայն մի նոր պաշար, հետե-վալես և նոր աշխատանք, ստացվում են նախորոք կա-տարված աշխատանքից : Բայցի այդ, նույն այդ հետա-զոտությունները և ճիշտ չափումները ցույց են տվել, վոր եներգիայի նոր ստացած պաշարը ամենայն ճշու-թյամբ համառ և այն աշխատանքին, վոր այդ ժամա-նակ (եներգիայի նոր տեսակ ստանալու համար) ծախո-ված եր :

Հիմա ընկ . Գողթունի, յես կարծում եմ, վոր քեզ համար միանգամայն պարզ և այն որենքի եյությունը, վորը, քո տեսելով, այնքան բարձրացրի : Այդ որենքը չենց այն և, վոր յերենք և վոչ մի պայմանում եներ-գիան, հետեւալպես հաւե աշխատանքը, չի կարող առաջ դալ վոչնչից : Սշխարհում միայն հնարավոր և եներ-գիայի մի տեսակի անցումը մյուսին : Նոր տեսակի ե-ներգիա ստացվում և ճիշտ այնքան, ինչքան ծախուված եր հին տեսակի եներգիայից : Եներգիայի հին տեսակը չքացալ, իսկ նրա տեղ ստացվեց ճիշտ նույն քանակով նոր տեսակի եներգիա : Վոչնչից, բարեկամ, վոչինչ ըս-

տանակ չես կարող : Իսկ յեթե դու նկատում ես ամբողջ բնության և կամ վորեն մարմնի մեջ եներգիայի վորեն մի տեսակ (որ չարժում, չերպություն, ելեկտրուկա-նություն, լույս), ապա այդ նշանակում և, վոր առաջ-ներում ծախուված ե յեղել ինչ վոր աշխատանք : Այդ աշ-խատանքն ե ծնել (առաջ բերել) այն եներգիան, վորը դու ահեմում ես մարմնի մեջ նոր տեսքով : Աշխատանք կատարելու համար, նշանակում և, պետք ե եներգիայի պաշար : Իսկ աշխատանք կատարելիս եներգիայի պաշա-րը չի վաչնչանում, այլ ծախուված մասը դառնում ե եներգիայի մի ուրիշ տեսակը :

Այնքան ել լավ չհասկացա, ընկ, կարտպեայան, նկատեց նորեկ լուսներից մեկը : — Դու ասում ես, թե եներգիան չի վոչնչանում : Իսկ յեթե յես վերե-բարձրացնեմ ջրի այր բաժակը, հետո ձեռքիցս բաց թողնեմ : Թո խոսքերի համաձայն բարձրացման եներ-գիան կը առանա անկման եներգիա : Ուղիղ և, համաձայն եմ : Այս բաժակը կընկնի և կջարդվի : Շարժման եներ-գիան ամբողջությամբ կծախալի բաժակի ընկնելու գր-րա : Աւրեմն բաժակից զրկվեցինք և քո գոլած եներ-գիան ել վոչնչացավ : Ճի՞չո՞ւ ե :

Վաչ յեղբայր, սխալվում ես, — պատասախանեց տեխնիկական դեկալարը, — քո բաժակը կջարդվի, իհարեն, վորի համար ակումբի վարկչին ստիպված կլի-նես վճարել քո հասցրածդ վնասի փոխարենը, բայց ե-ներգիան չմոնչնչացավ և դու նրան չես ել կարող վոչն-չացնել : Հատակի այն մասում, ուր ընկալ բաժակը, թույլ կերպով տաքացավ և հատակը, և բաժակի կը-առըները : Նախ և առաջ, բաժակի քաշով թեթև և և նա ընկալ վոչ այնքան բարձր տեղից, դրա համար ել նրա առաջացրած տաքությունը չնչին և աննկատելի կլինի :

Փորձերը ցույց են տալիս հետեւյալը: Վորովեսի մեկ կիլոդրամ ապակին ընկնելիս ամենաքիչը մեկ աստիճան տաքանա, պահանջվում է նրան գետին գտել մոռ 50 մետրը բարձրությունից: Բո ջրամանը հարվ 50 դրամ քաշունենա, այսինքն կիլոդրամի հինգ հարյուրերորդական (կամ մեկ քսաներորդական) մասը, իսկ դու նրան զցեցիր մոտագորապես 2 մետր բարձրությունից: Նշանակում է, ամբողջ աշխատանքը կլոր թվով հավասար և մեկ ասանորդական կիլոդրամոմետրի: Մեկ տաճարդական կիլոդրամոմետրը 500 անգամ փոքր է 50 կիլոդրամոմետրից: Դուրս ե գալիս, վոր հայտակը և ապակու կտորները դրանից տաքացել են մի աստիճանի, մեկ հինգհարյուրերորդական մասով: Այդպիսի չնչին տաքությունը հայտնաբերել շատ դժվար է: Իսկ յեթե գերցնեն ծանր մուրճը և սկսն նրանով հարվածներ հասցնել յերկաթի շերտին, ապա շուտով կնկատես, թե ինչպես ուժեղ են տաքանում թե մուրճը և թե յերկաթը: Յերբ մուրճը բավականին ծանր է լինում և հարվածն ել ուժեղ, յերկաթը կարելի յէ չեկացնել (կարմրացնել): Այդ գեղքում արդեն պարզ տեսնում ես, վոր մուրճի ընկնելու ններդիան վերածվեց ջերմության ններդիում:

— Հարցը ուարդ է, — նորից ընդհատեց Կարասուայանին նույն ունկնդիրը: — Յերկաթին իրոք տաքանում է, այլ յես ինքս ել շատ եմ նկատել: Բայց թե մի բան տարրինակ է, յերբ յես մուրճը վար եմ դնում, յերկաթըն սկսում է պաղել և շուտով բոլորովին սառչում է: Նշանակում է, ջերմային ններդիան կորչում է, ասու ինչ յեղալ նա քո կարծիքով: Միթե բալորովին չկորչով: — Այդ ինչը բառում նույնպես սիրաթում ես, բարեկամ, ջերմային ններդիան չլունացամ, նա չկորչով,

այլ, ինչպես ասում են, ցրիվ յեկավ: Դրա շնորհիվ տաքացան զնդանը, յերկաթի մոռի ողի մասնիկները, իսկ նրանք ել ջերմությունը տվեցին ողի մասնիկներին: Ջերմային ճառագայթումից տաքացան դարբնոցի ուտաերը և այլն: Հենց այդպիսի ճանապարհունությունը ել տարածվում է ջերմային ններդիան: Ջերմային ններդիան, այդ տեսակիտից, ամենից անկայունն է, նա շատ հետաքությամբ է չքանում, կամ ինչպես ասում են, ցրիվ և գալիս և ճառագայթում: Վորոշ դեպքերում զա ուգտակար և լինում: Մեր յերկադունողը, որինակ, ապահում է արեկ ջերմային ճառագայթներից: Յերբ ունակում վառարան են վառում, պատերը, հատակը և առաստաղն սկսում են տաքանալ՝ վառարանից ճառաղայթվող տաքությամբ ճիշտ այնպես, ինչպես պատահեց յերկաթի հետ գարբնոցում: Ճառագայթումը հաճախ վնասակար է: Ջերմային ններդիայի մի մասն այդ գեղքում անօգուտ և ծախսվում: Այդ մասին յես զետ հետազարում կիսում:

Հիմա, յես կարծում եմ, վոր ձեզ համար արկեն շիսնկամախ պարզ կլինի, վոր ններդիան վաչ կարող է վոչնչանալ և վոչ ել նոր առաջ դալ: Մի տեսակի հներդիան միայն կարող է գանհալ հավասար քանակով ուրիշ տեսակի ններդիա: Այստեղից պարզ պիտք է լինի, վոր յերբ մեքենան աշխատում է, ապա այդ կարող է աեղի ունենալ մի ուրիշ տեղից վերցրած ններդիայի հաշվին, վորը և հաղորդվում է աշխատող մեքենային:

— Ապա մի սպասարի, ընկ տեխողեկ, տեղից վեր թռչելով բացականչեց Գողթունին, — կնշանակե Գետրոսյան ուղում եր կատուցել մի այնպիսի մեքենա, վորն իրեն աշխատեր, վորը տար մշտական աշ-

իստանք, իսկ ինքը զբա փոխարեն վոչ մի աղբյուրից
վոչ մի եներգիա չստանար:

— Ճիշտ ե, ընկ. Դողթունի, հենց այդպես ել ե,
հենց արդարի մեջենա յեր ուղղում կտուուցել ընկ. Պետ-
րոսյանը: Իսկ յես քեզ չելի ասում, ընկ. Գողթունի,
վոր յերբ ինձ ուշադրությամբ լսես, ինքդ գլւխ կընկը-
նես, թե ինչու Պետրոսյանի մեջենան բանի պետք չե:
Հենց այդպես ել զուրս յեկալ: Կառուցել այսպիսի մի
մեջենա, վորն անընդհատ աշխատի, առանց եներգիայի
թարմ պաշտրների աղբյուրի, հնարավոր չե: Այդպիսի
մեջենաներն են, վոր «պերպետուում մորիի»—հայե-
տենական շարժիչներ-անունն են կրում: Դեռ մինչև հի-
մա յել կան մարդիկ, վորոնք կարծում են, թե իրենց
յերբեք կաջողվի այդպիսի մեջենա կառուցել: Պատե-
րադի ժամանակ, մեկ ու կես տարվա ընթացքում, հա-
վիտենական շարժիչ կառուցելու 28 առաջարկություն-
ներ ստացվեցին Խաղմա-Արդյունաբերական Կոմիտե-
յում: Այդպիսի ստացարկություններ ստացվում են
մինչև որս ել, որինակ, Մոսկվայի գանալան դիտական
ընկերությունները: Նույնիսկ նման անողուու մեջենա-
խաղմայիք ես, վորի մեջ մշտապես ստուվեր վորեն մի
փոքրիկ անիվ, թեկուզ և չկատարելով վոչ մի աշխա-
տանք, կրկնում եմ, դարձյալ չի կարելի կառուցել: Ա-
մեն պտուման ժամանակ միշտ առաջ և զալիս առանցքի
շփում, անհրաժեշտ ել լինում հալթահարել ողի դի-
մադրությունը ե, հետեւմապես, անհրաժեշտ ել լինում
աշխատանք կատարել: Իսկ յերբ աշխատանք ե կատար-
վում, ապա ուրեմն մեջենան պետք ե «սնել», այսինքն
պետք ե նրան հաղորդել եներգիայի վարու պաշար:

Աշխարհում դրյություն ունի եներգիայի վորու
պաշտը: Մեր աշխարհի վոր ծայրում ել ինի, յերբ

Ճորիե աշխատանք ե կատարվում, ապա այդ կարող և
աեղի ունենալ միայն այդ պաշարի հաշվին: Իսկ այդ
բանից, իհարկե, ամբողջ աշխարհի եներգիայի պաշտ-
րի քանակից նույնիսկ աեմնաչնչին չափով վոչ ավե-
լանում ե վոչ պակասում: Երա քանակը մնայուն ե:
Աշխատանքը կայանում ե նրանում, վոր եներգիայի մի
տեսակը փոխվում ե մի այլ տեսակի եներգիայի: Իսկ
այդ անցման ժամանակ, առաջ ե գալիս ճիշտ այնքան
նոր եներգիա, վորքան ծախսված եր նախորդից: Հենց
դրանումն ել կայանում ե մեր այն որհնքը, վորը կոչ-
վում ե եներգիայի պահպանության որենիք:

— Ծնորհակալ ենք, ընկեր տեխնեկ, — ձայնեցին
չորս կողմից բանվորները: Մեզ հաճար ամեն ինչ
պարզ ե, պարզ ե, թե վորն ե այդ որենքի եյությունը
և թե ինչու չի կարելի ընկ. Պետրոսյանի հնարած մե-
ջենան կառուցել: Բայց թե ընկեր տեխնեկ, — առաջ
շարժվելով, սփելացրեց բանվոր Պարեգինը, — մենք
կուղելինք իմանալ նուև այն, թե վորանդից ստացա-
ցավ եներգիայի այդ պաշարը մեր աշխարհում, ինչ-
քան և ինչպես ե փոփոխու նրա մի տեսակը մյուս տե-
սակին: Լավ կլիներ, ընկ. Կարապետյան, այդ մասին
ել մի քիչ զրուցելով մեզ հետ:

— Յեօ իմ խոսուումս կատարեցի, այսոր ձեզ
պատմեցի ե այդ հոչակավոր որենքի և մեքնայի մա-
սին: Արդեն ուշ ե, ընկերներ, դուք ել, յես ել արդեն
ոկտեցինք հողնել: Յեթե ցանկանում եք վազն այսուհե-
ղաբձյալ հհավաքվենք, յերրորդ և վերջին անդամ ե
յես, ինչքան կարող եմ, կպատասխանեմ ձեր բոլոր
հարցերին: Յեթ կամ այսպես անենք: Վազը չե մյուս
որս հանդասի որ ե, յեկեք ցերեկվա ժամի յերկուամին

Հավաքվենք այստեղ : Մենք մոտ մի ժամ այստեղ կղուրուցենք հետո կղնանք քաղաքից դուրս դեպի սըղոցարանը : Յես ձեզ այստեղ գործի (աշխատանքի) ընթացքում ցույց կտամ, թե մարդիկ ինչպես են սովորել եներգիայի հետ վարպել իրենց ցանկության համաձայն :

— Թող արդպես լինի, վաղը չեմ մյուս որը կհավաքվենք :

Բանվորները տեղերից վեր կացան և իրար խառնվելով դուրս յեկան և կամաց-կամաց ցրվեցին իրենց տները : Նրանք բրար մեջ դեռ յերկար խոսում եյին և եներգիայի որենքի, և թե Պետրոսյանի մեքենայի մասին : Իսկ Պետրոսյանը միշտ լուռ եր, նա ամբողջ յերեկոն, զրույցի ընթացքում, բառ անդամ շասաց : Նա ևս շարժվեց դեպի տուն բավականին մուայլ և ըստ յերեխույթին, անրավական : Մի կողմից նրան թվում եր, վոր իրավացի յերնկ . Կարապետյանը, բայց մյուս կողմից նրան զժվար եր իր սերած մեքենայից լափանկել : Նա շատ եր նրանով զրադիլ, շատ ժամանակ եր դործադրել նրա վրա : Նրան զեռ ելի թվում եր, վոր կարող ե պատճել, ընկ . Կարապետյանը վորեև հարցում սիստմում ե և իր ժամանակ մեքենան կաշխատի : «Անպայման կընամ հանդստի որը», վորոշեց նա, «նորից կլոեմ մեր տեխնիկին, նորից կիսունք այդ ժամին և այնտեղ կերեա, թե մեղնից վորն է իրավացի :

III

Հանդստի որը ուկնդիրները նորից հավաքվեցին սկզբում :

Մայիս ամսի առաջին որերն եյին : Որը արեային եր և պարզ յերկնքում վոչ մի ամս չկար : Ակումբի լուս

սամուսները լայնորեն բացված եյին և գարնանային թարմ ողը տարածվում եր սենյակի ներսը :

— Միայն թե մի խնդիր ունենք, ընկ . տեխնիկ, աշխատիր մեր տված հարցերին պատասխանել վորքան հնարավոր և կարճ, — խոսեց բանվորներից մեկը, — լավ կլինի չուտ պրօնենք, վոր կարողանանք չուտով դուրս գալ և մի քիչ թարմ ողում լինել :

— Կաշխատեմ, — պատասխանեց Կարապետյանը : — Նախանցյալ որը յստ ձեղ պատմեցի եներգիայի սլահ-պանության որենքի մասին : Վերհիշեք, վոր այդ որենքը մեզ սովորեցնում ե այն, վոր մեր աշխարհում գոյություն ունի եներգիայի վորոշ անփոփոխ (մնայուն) պաշար : Ամեն մի աշխատանք կատարվում և միայն այդ պաշարի հաշվին և ամեն մի աշխատանքի հյությունն այն է, վոր մի տեսակի եներգիան փոխվում և մի ուրիշ տեսակի : Իսկ վո՞րտեղից ստացվեց և ինչպես կազմվեց եներգիայի արդ պաշարն աշխարհում : Այդ հարցին ուղղակի պետք է առաջ հետեւյալ պատասխանը : Աշխարհում («աշխարհ» ասելով, այլիալ գեղքում պետք ե հասկանալ արեգակնային համակարգությունը) յեղած եներգիայի աղբյուրը հանդիսանում և արմը : Մի ժամանակ, սրանից մի քանի հարյուր միլիոն տարի առաջ, արևեն իրենից ներկայացնում եր թեթեվ թափանցիկ մշուշ (մեզ) և հսկայական տեղ եր բռնում տիեզերքի տարածության մեջ : Այդ մշուշի ժամանիկները առաջ գտնվում եյին մեկը մյուսից հետու : Դրանք գտնվում եյին մշուական շարժման մեջ և և սկսեցին իրար ձգել : Այդ ժամանակ նրանք ժողովում եյին իրար և նրանց կինետիկական (շարժիչ և եներգիան փոխվում եր ջերմային եներգիայի : Այդպի-

առջ տեղի յեր ունենում այլ մշուշի խոսցումը, իսկ դրանից ել այդ խոսցած մաքմինը ավելի ու ամելի յեր տաքանում :

Սկզբում մեր արել դարձել է ահռելի մեծության մի աստղ, լուսալորվելով կարմիր լույսով : Հետագայում նրա մասնիկները խոսցել են, չափերն ավելի փոքրացել և նա սկսել է լուսավորվել գեղին լույսով (նրա ջերմությունն ավելացել է) : Հետագայում մեր առողջը, — արել յերկար ժամանակի տևազությունից հետո, ավելի շատ խոսնալով, սկսել է փայլել պայծառ սպիտակ լույսով : Խոսցման ժամանակ արել տարության աստիճանը միշտ բարձրանում եր, բայց մերինույն ժամանակ, մեծանում եր նաև ջերմության կարուսալ, գեղի տարածությունը տեղի ունեցող ճագայթումից : Ներկայումս արեն արդեն սկսել է ավելի շատ ջերմության կորցնել, քան թե նա ստանում է հետագա խոսցումից և իր վրա տեղի ունեցող մյուս յերելութներից : Արեն այժմ ել հակայական մեծության մեր գեղին աստղել : Նա 330·000 անգամ մեծ է յերկադնից, նրա տարության աստիճանը (տեմպերատուրան) արտաքին մակերեսույթի վրա հասնում է 6·000 աստիճանի, իսկ ներսում շատ ավելի բարձր : Շիկացած արել ջերմացին եներգիան ճառագայթում է գեղի բրուր կողմերը, մեր յերկիրն ել իր եներգիայի ամրող սրացարն ստանում է արելից :

— Իսկ հետաքրքիր եր իմանալ, թե ինչքան եներգիա կա արել վրա, հարուստ և արդյոք եներգիայով մեկ ել հետաքրքիր եր իմանալ, թե ինչքան ժամանակ է երկիր կանի այդ եներգիան, — Հարցրեց ընկ. Սիմանցանք :

Կարող ես բոլորովին չանչանդստանալ, բարեկամ, յեղած եներգիան լիսլին բավական է : Դու կարող ես նրա մասին գատել թեկուզ այս վառվուն որդասրբակոմից : Մառելից կալս լնկած ճյուղերը, նրանց լայնացաց ունիթները, ծաղիկները, գետնի կանաչ խոտերը, մեր արտերում աճող հացահատիկները, զարնանային այս ջերմ ողբ և այլն և այլն, այդ բոլորն իբենց գոյությամբ ուրիշ վոչինչ չեն, քան արեն եներգիայից առաջացած աշխատանքի արդյունքը : Ենի զարժանալին այն է, վոր այդ ամրող աշխատանքի հաւաք արել ծախսել և իր եներգիայի պաշարի ամենամնչան մասը : Բայց յես կարող եմ քո հարցասիրությանը բավարարել նաև թվերով : Արևի մի կիլոդրամը չշուշանին վիճակից խոսնալով, արտադրել ե 2·900 կալորիա, վոր կարող ե յեւանելը 2·900 կիլոդրամ (մաս 180 ֆութ) ջուր : Արքանի միայն մի կիլոդրամ արելց : Իսկ արեն մատան մոտ քանի հակար տրիլիոն կիլոդրամ է : Հիմա յեմե կուղես, կարող ես հաշվել, թե ինչքան ջերմացին կորորիա նա կարող է տալ : Ստաց վոր արդյունքը բազմապատճելը 427-ով և դու կատանաս կուտակված արեային եներգիան չափված կիլոդրամոմետրներով :

— Վոչինչ, վատ չե . կարգին անտեսություն է : Յես կուլյելի նաև իմանալ, թե նա ինչքան ժամանակ հերիք կանեք :

— Դրա համար ել կարող ես չանչանդստանալ : Ուրեմն գեր շարունակում է խոսնալ և դրանից ել տաքանալ : Ճիշտ և, այժմ նա ջերմություն ավելի յե կործնում, քան սահնում, սակայն յեղած պաշարը գեր շատ ու շատ միլիոն տարիներ է երեք է : Միայն մի որինակ .

յերբ արևը խոնանում է իր լայնական մեծության մեկ տասհազարերորդական մասով, ապա նա այդ գեղքում տալիս է (արտադրում է) այնքան եներգիա, որը վերջինս կարող է բավականանալ 1.500 տարի: Յեթե ջերմությունն անոգուստ տեղ չծափակեր, ցրվելով տիեզերական տարածության մեջ, ապա արևակնային եներգիան հավիտյանս կբավականանար: Բայց չերմության ցրվելու այդ հատկությունը մեզ յենթադրել ե տալիս, վոր մի ժամանակ արեգակնային եներգիան ել կապառի, նա ամբողջությամբ կցրվի: Կյանքը մեր յերկրագնդի վրա կվերանա շատ ավելի շատ, քան արևը կմարդի: Գիտնականները ցույց են տվել, վոր յեթե արեի չերմաստիճանը իջնի 3000 առավագանի, ամբողջ յերկրագնդը կծածկվի սաստ հաստ ծածկացով, կակսվի Հովհաննական գիշերը, և ամբողջ կենդանությունը կվունչանա: Մտկայն գիտնականների մի ժաման ել կարծում ե, վոր այդպիսի բան չի պատահի և վոր արեգակը ուրիշ աղբյուրներից եներգիայի նոր պաշարներ կստանա, բայց այդ այնքան հեռու ապագայի դործ ե, վոր կարիք չունենք այդքան հեռագոր ժամանակների համար գուշակություններ անելու:

— Այս, այս, դու իբավացի յես, բնկ. Կարաօնեայն, ավելի լավ ե կանգ առնենք նորից յերկրագնդի վրա: Պատմիր մեզ, թե ինչ ձեզով ե արեն ստեղծում եներգիայի արդարիո տարբեր տեսակներ, — առաջ մինչ այդ լուս մնացած բանփորհներից մենք:

— Եատ բարի: Յես արդեն մի քանի անդամ տուիթ ունեցա տեղու, վոր եներգիան վաշնչից չի կարող ըստացվել: Մենք կարող ենք միայն եներգիայի մի անտեսիլ փոփել ուրիշ տեսակի: Յերկրիս վրա մենք

ոգուլում ենք գլխավորապես եներգիայի յերեք աղբյուրներով, այն ե հողմի (քամու), ջրի և վառելանյութի (վառելիքի) եներգիաներով: Եներգիայի այդ բոլոր աղբյուրներն ել իրենց գոյությամբ աբեկին են պարտական: Արեվի ճառագայթներն ընկնելով յերկրի վրա, — ցամաքի, կամ ջրի մակերելույթն, տաքացնում են նրան: Դրա շնորհիվ տաքանում ե նաև նրանց վերևը գտնվող ողը: Տաքացնումն, ի հարկե նայած հանգամանքներին, ամեն տեղ միատեսակ չի լինում: Յերբ տաքանում ե գետերի, լճերի, ծովերի և ովկիանոսների ջրային մակերելույթը, տեղի յե ունենում ջրի գույշիացում: Ցամաքի վերեկվը գտնվող տաք ողը ինչպես և ծովի վերել գտնվող և գույրչիներով հազեցած ողը սառն ողեց ավելի թեթև լինելով, սկսում ե բարձրանալ վերե: Դեպի այդ աղատված տեղն սկսում ե հասել ողը ուրիշ տեղերից: Այդպիսով, սկսում են փչել քամիներ: Քամու հետ միասին բերվում են նաև ջրացնին գույրչիներ: Յերբ այդ զույրչիները սեղմանում են (խոտանու են), հասելով սովորական կաթիների չափին, նրանք սկսում են կամ վորպես անձրեւ և կամ վորպես ձյուն թափվել յերկրի վրա: Ուրիմն զուք տեսնում եք, թե ինչպես արեվի չերմության աղբեցության տակ ստացվում են և անձրեվը և քամին: Յերբ զնաք քալաքի շրնջակայլը, յես ցույց կատամ, թե ինչպես մարդը կարողացել ե քամուն և ջրին ստիպել, վոր իր համար ոգտակար աշխատանք կատարեն:

Բույսերը արեվի ճառագայթային եներգիայի հաշվին մշակում են բոլոր այն նյութերը, վորոնցից իրենք կազմված են: Ողը տարբեր գազերի խառնուրդ է: Նրա բաղադրության մեջ մտնում են, գլխավորապես աղոտ,

Թթվածին և չնշին քանակությամբ ջրային դրույշիներ
 ածխաթթու դադ և մի շարք ուրիշ, այսպես կաշված,
 հաղվագյուտ գաղեր: Բույսերի կանաչ տերեվները կը-
 լանելով արեղակնային եներդիմն, վերջինիս հաշվին
 մեծ աշխատանք են կատարում: Երանք խլում են ողից
 ածխաթթու դադը, վորը կազմված և ածխածնի և թրթ-
 վածնի միացումից: Դրանից հետո, նրանք ածխաթթու
 դադից վերցնում են իրենց խել կառուցվածքի համար
 անհրաժեշտ ածխածնը, խել թթվածինը վերապարձ-
 նում են ողին: Այդպես են արելի ողնությամբ սնվում
 և աճում բույսերը: Ածուխի դրծածության ժամա-
 նակ, հաճախ շատ կտորների վրա նկատում ենք բույ-
 սերի հետքեր (պատկերներ, կնիք): Գիտնականներն
 այժմ ճշտորեն համտատել են, վոր տորֆը, գորչ ածու-
 թը, քարածուխը և անտրացիալը^{*} իրենցից ներկայա-
 ցնում են մի ժամանակ ասպրան բույսերի ձևափախու-
 թը: Տորֆի առաջանալը մեծ քանակությամբ տեղի յէ
 ունենում լներում և գետերի հովիտներում: Տորֆային
 ձահճը մի քանի հարյուր հազար տարիների ընթաց-
 քում կարող ե իջնել (ցածրանոլ) և դառնալ ծովի հա-
 տակ: Ավաղները, կավերը և մյուս տեսակները կծած-
 կեն նրան հաստ չերտով: Մովք ժամանակի ընթաց-
 քում կարող ե վերանալ, նրա հատակը կրաքարանա-
 ժինչել հողի վերեվի չերտը, կհավասարվի յերկրի
 մակերեւութին, խել խորքում անընդհատ կշարու-
 նակի բուսական մասսաների գանդաղ ածխացութը:
 Անցնելով մի քանի միլիոն տարի, առաջանում ե մուգ
 ու ածուխը (բորյա սոլ): Խել յեր այդ ածուխի տե-

* Անտրացիալ քարածուխի մի տեսակն ե, ուր ածխածնը ա-
 շերի մեծ ուստի յէ մնում:

սակները յևնթարկվեն հողային չերտերի ուժեղ ճրն-
 շըման, այլ վեպքում կառաջանա քարածուխի: Այն բույ-
 սերը, վորոնք քարածուխի են առաջացրել, այժմ արդեն
 դոյտթյուն չունեն, նրանք պատկանում են մեռած տե-
 սակների թվին: Նրանք այլևս չեն պատահում բնու-
 թյան մեջ: Այսպիսով, ընկերներ, դուք տեսնում եք,
 վոր այն ենեղիան, վորը մի ժամանակ բույսերն ստա-
 ցել են արելից, մենք ողոտագործում ենք հիմա իբրեք
 չոչեկաթսայի հոգի վառելիք:

— Խել չեյիր կարող ասել, ընկ տեխղեկ, թե ինչ-
 քան եներգիա յէ կուտակվել ջրի, քամու և ածուխի
 մեջ, ձայնեց տեղից ընկ. Գոյզունին:

— Կարող եմ քո այդ հարցին ել պատահանել:
 Քեզ, ի հարկե, հայտնի պետք ե լինի, վոր եներգիայի
 քանակը կախումն ունի այն նյութի քանակից, վորի մէջ
 նա պարփակված է: Մի վագոն ածուխն, անչուշտ, իր
 մեջ ավելի եներգիա յէ պարունակում, քան մի մեղքո
 ածուխը: Այդ պատճառով ել, համեմատելու համար,
 պետք ե վերցնել միատեսակ ծավալներ և ածուխի և
 ողի (քամու) և ջրի համար: Վորպես ծավալի միավոր,
 վերցնենք խորանարդ մետրը: Փորձեք ցույց են տա-
 լիս, վոր որինակ՝ ողի մի խորանարդ մետրը, մի վայր-
 կանում 5 մետր արագություն ունենալու գեպքում (կամ— 5 մետր արագությունի փշելու գեպքում), ըն-
 դունակ ե կատարելու մեկուկես կիրուրամունետը աշ-
 խատանք: Գիսը, վորը հսում ե մի վայրկանում 1 1/4
 մետր արագությամբ, ամեն մի խորանարդ մետր ջրին
 տալիս ե 8 կիլոգրամունետը եներգիա: Շատ ավելի մեծ
 եներգիա յէ սուագիւռ ջրվեժներից: Վորպես որինակ,
 յես կուղեմ բերել ներադարձի ջրվեժի հաշվումը:

Այդ ջրվեժում, ամեն մի վայրկյանում 7.500 խորանարդ մետր ջուր թափվում է 50 մետր խորություն ունեցող մի անգունդ: Մի խորանարդ մետր ջրի քաշը հավասար է 1000 կիլոգրամի, հետեւաբար մի վայրկյանում ընկնուլ (թափվող) ջրի քանակը հավասար է $7\frac{1}{2}$ միլիոն կիլոգրամի: Ջրի այդ քաշը բաղմակատկելով անկման բարձրությամբ՝ 50 մետրով՝ կատոնանք, վոր Նեխագարայի ջրվեժը մի վայրկյանում տալիս է 375 միլիոն կիլոգրամոմետր աշխատանք:¹⁾ Ինչպես յես արդեն ոկտոսմ առացի, մի ձիու ուժի կարողությունը հավասար է մի վայրկյանում կատարվող 75 կիլոգրամոմետր աշխատանքին: Ուրեմն, դուրս և դալիս, վոր Նեխագարայի ջրվեժի կարողությունը հավասար է $\frac{375,000,000}{75} = 5$ միլիոն ձիու

ուժի: Վորպեսդի զուք կարողանաք պատկերացնել ձեղ, ընկերներ, թէ ինչ վիթխարի եներդիս յես պարունակում իր մեջ Նեխագարայի ջրվեժը, միայն կասեմ հետեւյալք—այդ եներդիս կարող է բավարարել ուստական ամբողջ արդյունաբերությունը,²⁾ զեռ մի բան ել այդ եներդիս կամքանա: 1926 թվի գելտեմբերին տեղի ունեցավ Վոլխով գետի վրա կառուցված խոշոր ելեկտրուկայանի բացումը (Վոլխովստրոյ): Ջրի անկման ուժով այդ կայանը ելեկտրական եներդիս յետալիս ամբողջ Ենինդրագին: Ուկրայնայում կառուցվում է Դնեպրոստրոյը, վորի կարողությունը հասնելու յետ 800.000 ձիու ուժի, վորը կավարտվի 1932 թ.:


¹⁾ Այդ ջրվեժը գտնվում է Հյուսիսային Ամերիկայում, Միսոսիլիայի գետի վրա:

²⁾ Բայց զայտ վերջին յերկու յերեք տասներեք արդյունաբերությունը, վորի անհամեմատ աճել է ։ Թարգմանիչ

Այդ հիւրուկայանը եներդիս յետալիս ամբողջ այդ շրջանի լեռնային և մետաղադործական արդյունաբերությանը:

Շատ մեծ եներդիս յեն պարունակում իրենց մեջ պայմանագիր նյութերը: Մի խորանարդ մետր ածուխը վայրկելիս կարող է արտադրել մի վայրկյանում 76.000 կիլոգրամոմետր եներդիս, իսկ որինակի համար, պայմանագիր ժելատինը կարող է տալ մի վայրկյանում յերկու միլիարդ կիլոգրամոմետր:

Յես արգեն սկզբում ձեզ առացի, թէ ինչպես են մեր ժամանակի զիանականներն իրենց պատկերացնում նյութի կառուցվածքը: Նյութը բազկացած է չափազանց մանր մասնիկներից, վարոնք ավելի փոքր են, քան ողի այն մասնիկները, գործնց մասին յես խոսեցի մեր առաջին զրուցի ժամանակ: Այդ մասնիկները կոչվում են առանձներ: Յենթագրում են, վոր առանձը բազկացած է մեծ թէ փոքր թվով ել ավելի փոքր մասնիկներից, վորոնք կոչվում են ելեկտրոններ: Առանձի կենտրոնում (մեջտեղում) տեղավորված է միջուկը, վորի շուրջը պատճիւմ են ելեկտրոնները, ճիշտ այնպես, ինչպիս մոլորակներն են պատճիւմ արեի շուրջը: Ելեկտրոնների և միջուկի մեջ գործում են ձգողական ուժեր և պիտի գործադրել շատ մեծ աշխատանք, վորպեսդի կարելի լինի առանձիւ չեռացնել մի ելեկտրոն: Հետևապես, տասնի մեջ պարփակված է շտա-



Ելեկտրոնի շարժումն իր միջուկի շուրջը՝ յբաժնի առանձի ուշի:

մեծ հերթին, կամ, ինչպես ասում են, հերասառմային
եներդիա: Միայն բարզ փորձերի միջոցով վորոշ զնով-
քերում հաջողվում ե գուրս քաշել ելեկորոնն ասո-
մից: Մակայն, գոյություն ունեն մի քանի նյութեր
(որ., նւրան, սադիում և այլն), վորոնց մաս երկ-
արոնները, իսկ յերեմն ել կենտրոնական միջուկները,
ինչպես ասում են, «քայլայվում են»: Այդ ժամանակ
նրանք առաջացնում են անասելի մեծ քանակի եներ-
դիա: Գիտնականներին հաջողվել է հաշվել, թե ինչ-
քան եներդիա յի պարունակվում այդպիսի նյութի մի
գրամի մեջ: Պարզվել է, վոր մի գրամ ուրանում պա-
րունակված եներդիան համասար ե 3 միլիոն կալորիա-
մի: Ածուխի մի գրամն այրվելիս առաջ է 7,7-ից, այսինքն, մոռավորապես
չետևապես մի գրամ ուրանի իր մեջ պարունակում ե-
այնքան անդամ այլելի եներդիա, վորքան անդամ յե-
րիք միլիոնը մեծ ե 7,7-ից, այսինքն, մոռավորապես
չորս հարյուր հազար անդամ: Ուրիշ խոսքով՝ ասած,
մի գրամ ուրանը իր մեջ այնքան եներդիա յի պարու-
նակում, վորքան 400.000 գրամ, կամ, չորս հարյուր
կիլոգրամ (25 վութ) ածուխը: Տնային անօհառություն
մեջ մի տարվա համար բավական ե ունենալ 5.000 կիլո-
գրամ (300 վութ) ածուխ: Ուրիշն, դուրս է գալիս, վոր
12 դրամ քաշ ունեցող մի կտոր ուրանը բավական կի-
ներ, վորպեսզի մի ամբողջ տասնեսություն մի ատարզա-
վառելանյութով ապահոված լիներ:


Դժբախտաբար տեխնիկան մինչև որս ել այդ ե-
ներդիան ոգտագործել չի կարողանում: Առաջինը, վոր
ուրանի քայլայւմը շատ դանդաղ ե տեղի ունենում,
իսկ յերկրորդ, մենք չենք կարող մեր ցանկության հա-

մաճայն արագացնել այդ քայլայւմը և դուրս հանել
ուրանի մեջ պարունակված եներդիան:

— Ափսոս, — քիչի տակ մթմթաց մանայոր Մի-
քայլելյանը, — կնշանակե առայժմ պետք ե սպասել: Քո
գործերը վատացան, ընկ. Գողթունի, սպասիր մի փոքր
և ել պետք չի լինի վոչ ածուխի, վոչ նավթի, վոչ վա-
ռելքի, վոչ կաթսայի և վոչ ել քո մասնագիտության
մարդկանց: Հնոցպանների բանը բուրդ ե:

— Կապենք, կուեննենք, — կես հերսոս, կես կա-
տակով, ձայնեց Գողթունին: — Ամեննենս ել չեմ այսոս-
սի: Հնոցպանի աշխատանքն այնքան ել հեշտ չե և ա-
ռանձին համույք չի պատճառում մարդուն: Իսկ դու,
ընկ. Կարապետյան, լավ կանես ինձ հետեւյան ասես,
թե տօրֆի, ածուխի, ջրի եներդիան ամբողջությամբ
և դառնում ոգտակար աշխատանք:

— Վոչ, ամբողջությամբ նա չի գառնում ոգտա-
կար աշխատանք: Արինակի համար, յեկեք քննության
առնենք, թե ինչպես ե ստացվում եներդիան չողմե-
քնայի մեջ: Վառեւատեղում (ТОПКА) այրվում ե ա-
ծուխը: Ջերմության մի մասը ծխի հետ մեկ տեղ
դուրս ե գալիս, զնում ե, մյուս մասը ծախսվում ե
ձգում առաջացնելու համար, առանց վորի ան-
հնար ե ածիխ լրիվ այրվելը: Գրանից հետո ջերմու-
թյունը կաթսայի դրսի կողմից, վորն ուղղված ե դե-
պի վառեւատեղը, անցնում ե ներսի սպատին: Կաթսայի
ներսի պատերը տաքանում են և իրենց ջերմությունը
առաջ են ջրին: Զուրբ յեռամ ե, այսինքն սկսում ե
գործընթացաւ: Այդ ժամանակ ջերմության մի մասը
գարճայի կորսվում է շոգի առաջացնելու համար: Գո-



Առերքակային աշխարհն ըստ Գամանակակից տեսության։ Կենունում աքհն է։

50

լորչին, չողետար խողովակի միջոցով, տրվում է գր-
լանին (ցիլինդր) և գլանը և մխոցը չարժման մեջ ե-
ղնում։ Զերմությունը դարձյալ անողուտ ծախսվում է
գլանի և մխոցի պատերը տաքացնելու համար։ Մխոցի
շարժումը հաղորդվում է թափանիլին և ջերմության
մի մասը նորից կորչում է մեքենայի հաղորդիչ մասե-
րի և անիվների առանցքների շփումները հաղթահարե-
լու համար։ Բանեցված գոլորշին գեռ բավականին տաք
վիճակում հաղորդվում է սառնարանին։ Այստեղ նո-
րից բոլորովին իզուր տեղը ջերմություն և ծախսվում
սառնարանը տաքացնելու համար։ Դուք տեսնում եք
թե ինչքան շատ ջերմություն է կորչում ամեն անդամ։
Սմենից առաջ վառելատեղում ամբողջությամբ ածու-
խը չի այրվում։ Հետո յել բացը տաքացնում է վոչ
միայն կաթսայի պատերը, այլև հատակը և վառելա-
տեղի շրջակա մասերը։ Ածուխի այրմելուց մինչև տա-
քությունը ջրին հաղորդվելը, կորչում է եներգիայի 30
տոկոսը։ Շոգետար խողովակում այդ եներգիայից
կորչում է ևս 5 տոկոս։ Իսկ պլանիզոր կորուսար տեղի
յի ունենում սառնարանում, այդտեղ կորուսար կալ-
մում է 55 տոկոս։ Վերջապես 5 տոկոս ել կորչում և
մեխանիզմի մասերի մեջ գիմադրությունը հաղթահա-
րելու վրա։ Այդպիսով չոգեմեքենան վորպես ոգուա-
կար աշխատանք, տալիս է վոչ ավել քան ամբողջ
ստացած եներգիայի 5 տոկոսը։

— Ամենեվին միաթարական չե, — նկատեց կամաց
ձայնով կաթսավար Գողթունին։ — Իսկ յես յենթա-
դրում եյի, վոր ձեր այդ գոված մասնադետները սո-
վորած կլինեն ավելի տնտեսաբար (խնայողաբար)
վարվել եներգիայի հետ։

51

— Այդտեղ մասնագետները մեղավոր չեն, իզուր
և նրանց մեղագրում, —առարկեց կարապետյանը: Ի
հարկե, իմ հիշատակած թվերն այնքան ել արախալի
չեն: Այդ պատճառով ել տեխնիկները քիչ չեն չար-
շարժում ույն բանի համար, վորպեսի կառուցեն այն-
պիսի մեքենա, վորի ողտակար աշխատանքը մեծ տո-
կոս կաղմի: Պետք ե ասել, այդպիսի մեքենաներ ար-
դեն կան: Այսպես կոչված ներքին այրման շարժիչնե-
րը տակիս են 30 և ավելի տոկոսի ողտակար աշխա-
տանք: Իսկ նոր ելեկտրական շարժիչները նույնիսկ
85 և ավելի թեծ տոկոս: Բայց կառուցել այնպիսի
մեքենա, վորն ամբողջությամբ մեզ տոր՝ վորովես ող-
տակար աշխատանք՝ իր մեջ ծախսված եներգիան, —
անհարին ե*): Մեքենայի մեջ մեջաւ լինում են շփուժ-
ներ և առարկեր տեսակի թերություններ, վորոնցից մուչ
մի կերպ չի կարելի ազատվել: Բացի այդ, բնության
մեջ եներգիայի բոլոր տեսակները վերջի-վերջո դառ-
նում են չերմություն, իսկ չերմությունը, ինչպես ար-
դեն ասացի, ամենափայլուն և «տնտեսական» եներգիան
է: Եներգիայի պահպանության որենքի հետ մեկտեղ
ընության մեջ գոյություն ունի և մի ուրիշ որենք, վո-
րը նույնպես հիշու ե, վորքան և առաջինը: Այդ որենքի
հիման վրա յել դուրս ե գալիս, վոր որինակի համար,
չի կարելի կառուցել այնպիսի շողեմեքենա, վորն ամ-
բողջությամբ վերադարձներ մեզ, վորպես ողտակար
աշխատանք, այն ամբողջ եներգիան, վորը նա ստացել
է կաթսայի վառելատեղում:

*): Բարակար աշխատանքի ամենաբարձր առկոսը հասնում
է այսպիս կոչված ելեկտրական հոսանքի անշարժ տրանսֆորմա-
տորների մեջ: Այդ տոկոսը յերեմ հասում է 98-ի, թե՛՛


— Իսկ չեյլիր կարող գու այժմ, թեկույթ և շառ-
ամառուս կերպով, պատմել մեզ նաև այդ որենքի մա-
սին, —Հարցրեց ընկ. Սիմոնյանը:

— Վոչ, չեմ կարող, այդ կարահանջի արնքան ժա-
մանակ (յեթե վոչ ավելի), վորքան տեսց մեր այս
յերեք որվա զրուցյը: Յեթե կուզեք, ընկերներ, կհա-
գաքվենք մի ուրիշ անդամ և յես ուրախությամբ ձեզ
կարածեմ նաև այդ յերկրորդ որենքի մասին: Իսկ հե-
տո, յես կարծում եմ, վատ չեր լինի, յեթե խմբով
դնայինք զեպի քաղաքի ըջակաւը, մի քիչ գրունե-
լու:

IV.

Բանվորները միանդամայն տարվել եյլն տեխնի-
կական ղեկավարի պատմածով և ղբա համար ել նոր
հիան նկատեցին, վոր յերկնքը ծածկվել և փոթորկա-
րեր ամպերով: Սկսեց փշել ուժեղ քամի, յերկնքի վրա-
բայլ կայծակներ և լսվեց վորոտի դղբդյունը: Մի
բայլ բռպեցից հետո անձրեկ այնպիսի հեղեղ թափ-
եց, վորպիսին լինում և միայն մայիսի սկզբներին
ներկայացի հարավային մասում: Փողոցներով սկսե-
լուքայնայի հարավային մասում: Փողոցներով սկսե-
լուքայնայի հարավային մասում: Այլևս չեր ել կարելի մտածել զրո-
ւանքի մասին: Իսկ անձրեկ շարունակում եր տեղալ,
մերթ մի քիչ թուլանալով, մերթ նորից ուժեղանալով:
Ըստ յերեսոյին նա դեռ յերկար եր շարունակվելու:

— Իսկ յես, ընկերներ, առավոտվանից զիտեցի,
վոր այսօր համանաբար անձրեկ կլինի: Բարովետը (մի
վործիք ե, վորավ նախորոշ կարելի յե իմանալ, թե ինչ
յիդանակ և սպառվում մոտ ժամանակի համար) գետ



Յես կերպեցի ինձ հետ մէ նկար. Նոր կըս ցուս եմ և արդյունք բաղադրի լուս կատարուի առաջանալ:

յերեկվանից սկսեց ցածրանալ : Հենց գրա համար Էլ ,
յս համենայն դեպս մտածեցի ինձ հետ վերցնել մի
նկար , վորի վրա ցույց և տրված քաղաքի շրջակա տե-
սարանը : Զի կարելի առել , վոր այս նկարը իրենից ներ-
կայացնում և մի վորեւ տեղի ճիշտ պատկերը , սա-
կայն այդպիսի տեսարաննելի մենք հաճախ ենք հան-
դիպում : Միայն պետք և մի բան նախորոք ի նկատի
ունենանք , վոր այն ամենն , ինչ վոր բնության մեջ
սովորաբար ցրված վիճակումն և հանդես դալիս , այս
նկարուած համաքված և մի տեղ , աքփոփված մի տեսա-
րանի մեջ :

— Ի՞նչ հեռատեսն ես յեզել , — ձայնեցին ամեն
կողմից ունկնդիրները : Բոլորը ցանկություն հայտնե-
ցին նայելու այդ նկարը : Ընկեր Կարապետյանն առան-
ձին զգուշությամբ բաց ազեց նկարը , ամրացեց սոսն-
տակի վրա և սկսեց մեկ մեկ ցույց տարով նկարի առօն-
ձին տեղերը , պատմել նրանց ժամին :

— Աչա այստեղ , աջ կողմից զուք տեսնում եք մի
ջրվեժ : Նա իրենից ներկարցնում և բարձրացրած
շանրության (ջրի) ներզիան : Չուրն իր ընկնելու ժա-
մանակ հետ և տալիս այն աշխատանքը , վորը նա ստա-
ցել եր վերե բարձրանալիս : Դուք տեսնում եք , թե ինչ-
պես ջուրը թափվում ե ջրաղացի անիվի թիակների վրա
և անիվը պարձնում ե (պտտացնում ե) : Այդ անիվի հետ
միասին , — տառմնավոր անիվների հողորդման ող-
նությամբ , — սկսում են պատճիլ նաև ջրաղացաքարե-
նությամբ , զարուի հացահատիկը ալյուրի յեն վերածում : Այդ
ըլք , վորոնք հացահատիկը ալյուրի յեն վերջին հաշվով , կատարվում ե
ամբողջ աշխատանքը , վերջին հաշվով , կատարվում ե
յորի եներպետորով : Բայց թե վարտեղից ձեռք ըերվեց

այդ եներդիան։ Այդ վոր ուժն և ստիպում ջրին լուրձարանալ մինչեւ ամսկերի բարձրության և հետո յիշ թափվել լեռների և հովիսների վրա, լցվել գետերը և ոռուները և վերջիւղիքու ողտակար աշխատանք կատարել։ Դրա պատճառն, ընկերներ, միայն և միայն արդարանային եներդիան է։ Սրեի ճառագայթները պառածողարձան, վոր լճերի, ծովերի և գետերի ժակերեւոյթի թերը գործչանան։ Նրանք, հաղորդեցին ջրի գոյորշներին վերև բարձրանալու համար անհարժեց եներդիան։ Ուրիմն վերև բարձրացած ջրի եներդիան այլ ինչ է, քան արեի եներդիան։ Զբաղացի անխվը չարժման մեջ և դրած վերջին հաշվով արեի ճառագայթներով։ Բլուրի այն կողմից փչում և թեթև քամի, կայ վրայով թեթևորեն սահում և ստափուտանավը, ուռուծ առադապուներով։ Դա յիշ քամու եներդիան և, — բայց վոր անդից նաև առաջացով։

— Իու սկզբում մեղ արգեն բացատրեցիր, վոր քամու եներդիան նույնպես արեից և, — պատասխանեց լողներից մեկը։

— Ճիշտ այդպիս և . . . զորս և գալիս ուրիմն, վոր այս գեպօւմն ել արեն և եներդիա տվողը։

Ահա այստեղ, առջեի մասում, կառուցված և շողեմեքնամ, իսկ այսուղի, հետեւում, լճի վրա մենք տեսնում ենք ըստենավր։ Նրանք յերկուսն ել բրնց եներդիան ստանում են կաթսայից։ Խակ կաթսան նրան ստանում և փայտի կամ ածուխի ուլրվելուց։ Փայտը ձևոք են բերում անտարից, իսկ ածուխը՝ ածխահորից։ Իսկ վորսեղից և ծառն ստանում այս նյութը, վորից նաև կազմված է։ Ածխածինիր՝ զլխավոր և կարենարարության նյութը, վորից փայտը կառուցված է, — նա ստա-

նում և ողից, այն և, ածխաթիթու գաղից, վորը խառնում և լինում ողի հետ։ Յես արդեն սկզբում ձեզ անցված է լինում ողի հետ։ Յես արդեն սկզբում ձեզ անցի, վոր ծառն արդ աշխատանքը կատարում և արեի սացի, այս ծառն արդ աշխատանքը կատարում և արեի ճառագայթների եներդիայով։ Նա խլում և ածխածինը ածխաթիթու գաղից, իսկ թթվածինը վերադարձնում և ածխաթիթու գաղից, իսկ թթվածինը վերադարձնում է ողին։ Նշանակում է, այն անտառը, վորն արտեղ ցույց է տրված ձախ կալմից, իրենից ներկայացնում և արեի է տրված ձախ կալմից մի պահեստ։ Այդ եներդիայի անսպաս պաշարի մի պահեստ։

Յերկաթը, վոր մշակվում և այսուղ, զարբնոցում, իր ջերմությունն ստանում և նույն աղբյուրից, իսկ այս ջերկաթի կարմիր գոյնը (լույսը) հանդիսանում և արեի սպիտակ գույնի մի մասը։

Մեր նկարում ցույց է տրված նաև ելեկտրական եներդիան։ Այնտեղ նա կուտակվել է փոթորկարեր ամպերի մեջ և ահա վորտեղ վոր և կիսայլստակի վարպես կարծակ։ Այստեղ ելեկտրական եներդիան հոսանքի մեջում ստացվում է զինամու մերենայից։ Լարերի միջնում նաև տարիում է քաղաքը և շրջակա գյուղերը։ Այնտեղ այն եներդիան կիսերածիի ջերմության, լույսի և մեխանիկական աշխատանքի եներդիայի։ Դիմածութեք մեխանիկական ստանում և շողեկաթուալի վառարաններ իր եներդիան ստանում և շողեկաթուալի վառարան նում փայտի կամ ածուխի այլովելուց և կամ ջրային առաջանակից։ Դուրս և գալիս, վոր ելեկտրական եներդարձումից։

³⁾ Յերե խոսքը վերտիքում և շողեկաթուալից դիմածութեք մեջ համար եներդիա ստանուուն, կառարձում և ենույալը, կաթսան ջուրը առքացնելով և շողի առաջացնելով, ապիս և

զիան ել և առաջանում արեկ եներգիայից : Ուրեմն, ե-
լիկորաքարշը (տրամվայ) , վոր մեղ այնքան ոգուանում
և տալիս , նույնակեն արեկ եներգիայով և շարժվում :

Մեր նկարի վրա մենք տեսնում ենք եներգիայի նաև
ուրիշ տեսակներ (պաշտրներ) . — որինակ , մկանային
եներգիան : Աչա տեսեք , ձիերը քաշում են հացահա-
տիկներով լիբը սայլերը : Զիերն եներգիան ստանում են
իրենց կերից , իսկ նրանք , մեծ մասամբ կերակրվում են
բույսերն իրենց հերթին առողջանում , պն-
դում և աճում են արեկ եներգիայից : Ուրեմն , կենդանի-
ների աշխատանքն ել կատարվում և արեգի եներգիայի
հաշվին :

Մարդը ևս բացառություն չի կազմում ընդհանուր
այլ կարգից : Ճիշտ ե , ով վոր չի աշխատում , նա չի
ուտում , բայց թե մյուս կողմից ով վոր չի ուտում , նա
աշխատել ել չի կարող : Սոված փորով մոչ աշխատանքի
մասին կարող ես մտածել և փոչ ել զլուխող կաշխատի :
Իսկ ինչ ե ուտում մարդը : — Ալյուր , միս , ձուկ , բանջա-
րեղեն և այլն , վոր նրան տալիս են կենդանիները և
բույսերը : Իսկ թե առաջնները և թե յերկողող-
ները , մենք արդեն տեսանք , վոր գոյություն ու-
նեն արեկ եներգիայի չորրհիվ : Նշանակում ե մարդն
և վերջին հաշվով արեկ եներգիայով և սնվում : Կատա-
րելով վորեւ աշխատանք , նա կատարում է այն արեկ
եներգիայի հաշվին : Բոլոր այս մտքերն ու գիտողու-
թյունները մեղ բերում են այն յեղբակացության , վոր

նրան շոգեառերին , վորը դրանից պատվելով , պատեցնում և
նաև իր առանցքի շարաւակության վրա գտնվող զինամուսեինա-
յի խարիսխը և այգականը առաջտնում է ելեկորական հոսանք :

Թարգմանիչ

շատ չնչին բացառություններով , յերկրագնդի ամբողջ
եներգիան առաջանում է արեկ եներգիայից : Արեկն
ենք մենք պարտական այն բոլորի համար , վորոնք հա-
րավոր են դարձնում մեր գոյությունը , մեր կյանքը .
նույնիսկ մեր կյանքը մենք արեկն ենք պարտական :
Յես ասացի : — «Հատ չնչին բացառություններով» :
Այդպիսի բացառություն է կաղմում , որինակ , ծովա-
յին մակնթացությունների և աեղատվությունների ե-
ներգիան : Նրանք տեղի յեն ունենում մասամբ լուսնի
աղղեցությունից : Բացի այլ , տիեզերական տարա-
ծությունից ընկնող քարերի (մետեորիտների) եներ-
գիան նույնպես արեկից չե : Վերջապես , կարելի յե հի-
շատակել նաև հրաբուխների և յերկրաշարժների եներ-
գիան , վորն ստացվում է յերկրագնդի ներուը գործող
ուժերի աշխատանքից :

Սակայն ամեն տեսակի եներգիա վերջի-վերջու-
դառնում է ներմություն , իսկ ջերմային եներգիան ,
ինչպես արգեն սասցի , ցրիվ և դալիս տիեզերական
տարածության միջ : Նա չի կորչում , չի վոչնչանում ,
բայց և այսպես , հետ ստանալ այն վորեւ այլ աշխա-
տանք կատարելու համար , վոչ մի կերպ հնարավոր չե :
Նա , թեպետ և պահպանվում է , բայց թե ինչպես ա-
սում են , արժեքազուրկ և գտնում :

Այստեղ մենք մոտենում ենք մի նոր սրենքի , վորի
մասին , յեթե կուզեք , յե ձեզ հետ մի այլ անդամ
կզբուցեմ : Բոլոր իր փոփոխությունների ընթացքում ե-
ներգիան ճշորին յինթարկվում է պահպանության ո-
ւենքին : Ճիշտ այնքան աշխատանք և ստացվում ,
վենքին : Ճիշտ այնքան աշխատանք և ստացվում ,
վորքին : Առաջ դրադրիցել : Առանց դրաց հա-
գործան եներգիայի վոչ մի աշխատանք հնարավոր չե

և առհասարակ, յերբեք հնարավոր չել կառուցել այս-
պիսի մեքենա: Հենց դրա համար ել, ընկ. Պետրոսյան,
քո մեքենան ուղղակի չի աշխատի և ուրիշ վոչքնչ, —
նա հակասում է, ինչպես արդեն ձեզ հայտնի գարձագ,
և ներդիմայի պահպանության ընդհանուր որենքին:

Հավաքվածներն առանձին գոհունակությամբ ը-
նորհակալություն հայտնեցին ինց տեխնիկին և տկա-
ցին մեկը մյուսի հետեւց գուրու զալ ակումբից, ու-
ղեգորվելով զեպի իրենց աները: Ամենից շատ զուհ եր-
ժնացել ընկ. Պետրոսյանը, վորն այժմ եր միայն ճշ-
տորեն հասկացել, թե վորն ե իր սիսալը:

«Այս չեմ ել մտածի կառուցելու այնպիսի մի
մեքենա, վորն աշխատեր առանց նախորոք եներդիա-
սունալու: Ամելի լավ ե մտածեմ կառուցելու այնպի-
սի հարմարություններ, վորոնք ավելի մեծացնելին յե-
ղած եներդիմայի ողտակար աշխատանքի տոկոսը, գող-
պեսզի այդպիս անորություն չծախսվեր մեքենաներին հա-
զորդված եներդիմայի մեծ մասը, ինչպես այդ աեղի յե-
ունենում այժմ»:

Սրտահց հաջողություն ցանկանք նրան այդ գոր-
ծում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0319917

13.288

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ (2 Ա.)



П. РОММ

КРУГОВОРОТ ЭНЕРГИИ

Госиздат ССР Армении
Эривань—1931